

Բացվեց Հարավային Կովկասում եգալի՝ Հայաստանի ազգային գերհամակարգչային կենտրոնը

Ս/թ. մայիսի 31-ին Երևանում՝ Ինժեներական քաղաքում, տեղի ունեցավ Հայաստանի ազգային գերհամակարգչային կենտրոնի բացման արարողությունը: Կենտրոնում տեղադրված է տարածաշրջանում առաջին՝ «Ազնավուր» գերհամակարգիչը, որն անվանակոչվել է ի պատիվ ֆրանսահայ նշանավոր շանսոնիե Շառլ Ազնավուրի:

Հայաստանի ազգային գերհամակարգչային կենտրոնի շահագործումն ու սպասարկումն իրականացվելու են ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի կողմից: Այս բացառիկ կենտրոնի ստեղծմանն աջակցել են ՀՀ կառավարությունը, Համաշխարհային բանկը, Եվրոպական միությունը, ՀՀ ԳԱԱ-ն, «Չեռնոբիլությունների ինկուբատոր» հիմնադրամը, ԱԹՈՍ (Ներկայում՝ Էվիդեն) ընկերությունը:



Հայաստանի ազգային գերհամակարգչային կենտրոնի պաշտոնական բացման արարողությանը մասնակցեցին պետական, դիվանագիտական, գիտական և մասնավոր ոլորտների ներկայացուցիչներ: Միջոցառման մասնակիցներին ողջունեցին ՀՀ Ազգային ժողովի նախագահի տեղակալ Հակոբ Արշակյանը և Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Մխիթար Հայրապետյանը:

Ելույթներով հանդես եկան նաև Համաշխարհային բանկի հայաստանյան գրասենյակի ղեկավար Կարոլին Գեգինա-

տը, ՀՀ-ում ԵՄ պատվիրակության ղեկավար Վախիկ Մարագոսը, ԱՄՆ դեսպանության քաղաքատնտեսական բաժնի ղեկավար Ալիսոն Հաննան, Ինժեներական ասոցիացիայի նախագահ Արամ Սալաթյանը՝ շեշտելով Հայաստանի ազգային գերհամակարգչային կենտրոնի կարևորությունը պետության զարգացման գործում:

Կենտրոնում տեղադրված «Ազնավուր» գերհամակարգիչը ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտին է նվիրաբերել Ֆրանսիայի Թուլուզի համակարգչային գիտությունների գիտահետազոտական ինստիտուտը:

Շառլ Ազնավուրի որդին՝ «Ազնավուր» հիմնադրամի համահիմնադիր և հոգաբարձուների խորհրդի նախագահ Նիկոլա Ազնավուրը, միջոցառման ժամանակ շեշտեց, որ հայրը, ում պատվին անվանակոչված է գերհամակարգիչը, հետաքրքրված էր ժամանակակից տեխնոլոգիաներով ու նորարարություններով: «1980-ականներին հայրս արդեն համակարգիչ ուներ, որն օգտագործում էր տեքստեր գրելիս և երգ ձայնագրելիս: Թերևս դա էր պատճառը, որ վաղ տարիքից տարված եմ եղել տեխնոլոգիաներով: Հուսով եմ, որ այս սուպերհամակարգիչը կօգնի հետազոտողներին հասնել մեծ առաջընթացի»,- ասաց Նիկոլա Ազնավուրը:

Միջոցառման կազմակերպիչները հատուկ շնորհակալություն հայտնեցին ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Յուրի Շուբուրյանին՝ «Ազնավուր» գերհամակարգիչը Հայաստան բերելու և հզորացնելու գործում իր կարևոր դերի համար:

ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի տնօրեն Հրաչյա Ասցատրյանը նշեց, որ «Ազնավուր» գերհամակարգիչի ձեռքբերումը ինստիտուտի և Ֆրանսիայի Թուլուզի համակարգչային գիտությունների գիտահետազոտական ինստիտուտի 25 տարվա համագործակցության արդյունք է:

Արևելյան գործընկերության երկրներից Հայաստանն առաջինն է, իսկ Եվրասիական տնտեսական միության մեջ

երկրորդ երկիրն է, որտեղ նման գերհամակարգիչ է տեղադրվել: Այս նորագույն ենթակառուցվածքը լուրջ խթան է Հայաստանում հաշվողական գիտության զարգացման համար, ինչը շրջայական դրական արդյունք կունենա գիտության մի շարք ուղղությունների շարունակական առաջընթացի համար:

«Ազնավուր» գերհամակարգիչն ունի 1 տերաֆլոպ հզորություն և վայրկյանում տեսականորեն կարող է իրականացնել 10¹⁵ գործողություն: Այն բաղկացած է մոտ 24.500 միջուկներից՝ միացված արագագործ կապուղիներով, որոնք հնարավորություն են տալիս իրականացնելու բարձր հաշվողական խնդիրներ: Գիտնականներն ու հետազոտողները, մասնավոր և պետական ոլորտները կարող են հասանելիություն ունենալ մինչև 1500 տերաբայթ հիշողության սարքերի:



«Գերհամակարգիչը կարող է օգտագործվել արհեստական բանականության, տվյալագիտության, թվային գիտության, ամպային տեխնոլոգիաների, մեքենայական ուսուցման, քվանտային ֆիզիկայի, աստրոֆիզիկայի, կենսահիմնարկային և բազմաթիվ այլ ոլորտներում: Նման գիտությունները զարգացնելու համար հզոր հաշվողական ռեսուրսներ են պետք: Շնորհակալություն մեր գործընկերներին աջակցության համար, որը հնարավորություն տվեց իրականացնելու մեր այս երազանքը»,- ասաց Հրաչյա Ասցատրյանը:

Հայկական առաջին գեոպարկի ստեղծման ծրագիրը

Վերջերս ՀՀ ԳԱԱ նախագահությունում տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ սեյսմաբանության, սեյսմակայուն շինարարության, բնական և տեխնածին աղետների հիմնախնդիրների խորհրդի նիստը: Նիստին մասնակցեցին ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սաղյանը, ՀՀ ԳԱԱ նախագահության անդամներ, խորհրդի անդամներ, ՀՀ շրջակա միջավայրի նախարարության, ԵՄԴ-ի, Վայոց Ձորի մարզպետարանի ներկայացուցիչներ: Բննարկվեցին Հայաստանում գեոպարկի ստեղծման նախադրյալները:

ՀՀ ԳԱԱ քիմիայի և երկրի մասին գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Լևոն Թավադյանը, շեշտելով գեոպարկի ստեղծման կարևորությունը, նշեց. «Գեոպարկը զբոսաշրջության տեսակ է: Այն կնպաստի տեղանքի ենթակառուցվածքի զարգացմանը, և, ամենակարևորը, հանրությունը տեղեկացվելու է այդ տարածքների երկրաբանական վտանգների մասին»:

Նիստի ժամանակ զեկուցմամբ հանդես եկավ ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի գեոդինամիկայի և երկրաբանական վտանգների լաբորատորիայի վարիչ, երկրաբանական գիտություններ



րի դոկտոր Արա Ավագյանը:

Նա նշեց, որ գեոպարկերն աշխարհագրական տարածքներ են, որոնց հիմքում առանձնահատուկ տեսարժան, երկրաբանական ժառանգությունն է՝ զուգորդված պատմական, հնագիտական, մշակութային բաղադրիչներով: Աշխարհում գեոպարկերը դիտարկվում են որպես կայուն տնտեսական զարգացման և շրջակա միջավայրի պահպանության խթան:

«Գեոպարկերում կարևորություն ունեցող բացառիկ երկրաբանական օբյեկտները և լանդշաֆտները կառավարվում են հետազոտական, պահպանման, կրթական և

կայուն զարգացման ամբողջական հայեցակարգով՝ ընդգրկելով տեղական համայնքների ուժերն ու հնարավորությունները»,- ասաց Արա Ավագյանը:

Վերլուծելով երկրաբանական հարուստ ժառանգությունը, ինչպես նաև գեոպարկերի ստեղծման միջազգային փորձը՝ առաջարկվեց ստեղծել ոչ թե ընդհանրական երկրաբանական հուշարժանների գեոպարկ, այլ մասնագիտացված:

Գեոպարկը կընդգրկի տարածքներ հիմնականում Վայոց Ձորի և Գեղարքունիքի մարզերից, փոքր հատվածներ կներառի նաև Կոտայքի և Արարատի մարզերից:

ՀՀ տարածքը ենթակա է բազմաբնույթ երկրաբանական վտանգների ազդեցությանը: Ուստի երկրաբանական վտանգներով մասնագիտացված գեոպարկի ստեղծումը կունենա նաև պաշտպանական նշանակություն:

Նորաստեղծ հայկական գեոպարկը կառանձնանա նրանով, որ համեմատաբար սահմանափակ տարածքում կունենա երկրաբանական վտանգների տարբեր ոլորտներին վերաբերող օրինակներ՝ ակտիվ տեկտոնական խզվածքներ, սողանքներ, նորագույն հրաբխականություն, հիդրոթերմալիզմ, լճային տրանսգրեսիա, զանգվածային ոչնչացման մասին վկայող շերտագրություն և այլն:

«Այս հանգամանքը հայկական առաջին գեոպարկին կտա բացառիկություն, առավել ևս, որ ընտրության արդյունքում կունենա տարածաշրջանային և մի քանի միջազգային նշանակության երկրատեղանքներ»,- ասաց Արա Ավագյանը:

Խորհրդի անդամները նշեցին, որ անհրաժեշտ է առաջարկվող տարածքում հիմնել ազգային գեոպարկ և ստեղծել կառավարող մարմին, որում կընդգրկվեն գիտնականներ, պետական կառույցների և համայնքների համապատասխան մասնագետներ:

Երեխաների պաշտպանության միջազգային օրը՝ հունիսի 1-ին, ՀՀ ԳԱԱ Արմեն Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի Երևանի բուսաբանական այգում երեխաների համար անցկացվեցին մի շարք միջոցառումներ:

Բուսաբանության ինստիտուտը և «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամը կազմակերպել էին «Բնության դեսպաններ» խորագրով բնապահպանական ցուցահանդես, որի նպատակն էր համախմբել բնապահպանական կրթությամբ զբաղվող կազմակերպություններին և դպրոցներին՝ ստեղծելով հարթակ

Միջոցառումներ Երևանի բուսաբանական այգում

հետազա համագործակցության համար:

Ցուցահանդեսում ներկայացված էին բնապահպանական կրթություն իրականացնող 10 կազմակերպություն և 15 դպրոց ՀՀ մարզերից և Երևանից, որոնք ընտրվել էին նախապես հայտարարված մրցույթի հիման վրա:

Առանձին տաղավարներում ներկայացված էին նաև ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը, Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիրը

(ՄԱԾԾ), Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան գրասենյակը (WWF-Հայաստան), Գերմանիայի բնության պահպանության միությունը (NABU), Գերմանական միջազգային համագործակցության ընկերությունը (GIZ), Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամը (FPWC):

Միջոցառման շրջանակներում երեխաների համար կազմակերպվեցին ազգային

պարերի ուսուցում, ազգային խաղեր, բնապահպանական աշխատարաններ (միջատների հյուրանոց, ծառերի ձևավորում, պատվաստ, գիտափորձեր, «Երկրորդ կյանք» թափոնին, կանաչ ապրելակերպի խրախուսում), բնապահպանական ֆիլմերի ցուցադրություն, թեմատիկ քննարկումներ և դասախոսություններ:

Հունիսի 1-ին Երևանի բուսաբանական այգու մուտքն անվճար էր:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

Ուշագրավ միջոցառում ՀՀ ԳԱԱ Արմեն Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտում

Հունիսի 5-ին՝ Շրջակա միջավայրի համաշխարհային օրը, ՀՀ ԳԱԱ Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտում նշվեց ակադեմիկոս Թախտաջյանի 114-ամյակը: «Բուսաբանության ոլորտում Արմեն Թախտաջյանն աշխարհի ամենահայտնի գիտնականներից է: Մենք պետք է միշտ երախտագիտությանը հիշենք մեր մեծամուսնու գիտնականների»,- իր ողջույնի խոսքում ասաց ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սարյանը:



Մեծարելով համաշխարհային ճանաչում ունեցող բուսաբանին՝ ինստիտուտը սահմանել է Թախտաջյանի անվան մեդալ: «Մենք որոշեցինք ստեղծել ավանդույթ՝ մեդալներ հանձնելով արժանի մասնագետներին, ովքեր մեր ինստիտուտից դուրս են աշխատում: Հուսանք՝ այս նախաձեռնությունը կդառնա ամենամյա, և մենք կկարողանանք ներկայացնել այն մարդկանց և կազմակերպություններին, ովքեր ներդրում են ունենում բուսաբանության ոլորտում»,- ասաց ինստիտուտի տնօրեն Արսեն Գասպարյանը:

Թախտաջյանի անվան մեդալներ հանձնվեցին 5 անվանակարգերին:

Բուսական աշխարհի հետազոտման ոլորտում առանձնակի ներդրման և գիտելիքի ստեղծման համար մեդալ ստացավ Էռնեստ Վիտեբը՝ Վիեննայի բնագիտության պատմության թանգարանի բուսաբանության բաժնի նախկին տնօրենը, ով ուսումնասիրել է Հայաստանի և Իրանի բուսական աշխարհը:

Բուսական աշխարհի վերաբերյալ հանրային իրազեկվածության մակարդակի բարձրացման ուղղված ջանքերի համար մեդալի արժանացավ հայկական բնական կոսմետիկա արտադրող «Նաիրիան» ընկերության համահիմնադիր Անահիտ Մարկոսյանը:

Մարդու կյանքում բուսական աշխարհի նշանակության և դերի բարձրացման համար մեդալ ստացավ բնապահպան Թամար Գալստյանը:

Բուսական աշխարհի պահպանության գործում ունեցած ներդրման համար մեդալը շնորհվեց WWF-Հայաստանի տնօրեն Կարեն Մանվելյանին:

Հայաստանում բուսաբանական այգիների զարգացման գործում ունեցած ավանդի համար մեդալի արժանացավ Հայ օգնության ֆոնդը: Մեդալը հանձնվեց ՀՕՖ-ի փոխտնօրեն Էդուարդ Կարապետյանին:


Բուսաբանական գիտության զարգացման և բնապահպանության ոլորտում ավանդի համար մեդալներ ստացան նաև հայ բուսաբան-կարգաբան, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Թախտաջյանի աշակերտ Էլենորա Գաբրիելյանը, հայ բուսաբան-սնկաբան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ Լիա Օսիպյանը և Թախտաջյանի աշակերտ, բուսաբան-սնկաբան, կենսաբանական գիտություն-

ների դոկտոր Վանդիկա Ավետիսյանը:

Շնորհավորելով մեդալակիրներին՝ ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ռուբեն Հարությունյանը նշեց. «Ես իսկապես հպարտ եմ, որ 2017 թ. կարողացանք Բուսաբանության ինստիտուտում անվանակոչել Արմեն Թախտաջյանի անունով: Հիմնադրվել բուսաբանության ոլորտում ավանդի համար մեդալների արժանացած մեր ավագ սերնդի ներկայացուցիչների եռանդով՝ կարելի է վստահորեն պնդել, որ եթե դուք ուզում եք շատ երկար ապրել, դուք պետք է լինեք բուսաբան»:



ՀՀ ԳԱԱ Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի գիտքարտուղար, երկրաբուսաբանության և էկոլոգիական ֆիզիոլոգիայի բաժնի ավագ գիտաշխատող Ժաննա Հովակիմյանը ներկայացրեց ակադեմիկոս Թախտաջյանի գործունեությունը: Նա նշեց, որ Արմեն Թախտաջյանը Հայաստանի գիտությունների ակադեմիայի բուսաբանության ինստիտուտի հիմնադիրն ու առաջին տնօրենն է, հայկական բուսաբանական դպրոցի ստեղծողը: Թախտաջյանը կազ-



մել է Հայաստանի բուսականության քարտեզը: Նրա անունն են կրում բուսական և կենդանական աշխարհի բազմաթիվ տեսակներ: «Արմեն Թախտաջյանն իր ամբողջ կյանքը նվիրել է գիտությանը՝ անցնելով իր կյանքի ընթացքում հայրենիքի բնության ուսումնասիրությունից դեպի բնական աշխարհի զարգացման գլոբալ օրինաչափությունների ընդհանրացում, թողել է հարուստ գիտական ժառանգություն, ավանդույթներ, որոնք այսօր էլ նրա աշակերտները շարունակում են: 20-րդ դարի ակադեմիկոս Բուսաբանը, որը բուսների էկոլոգիայի կարևորագույն ուսմունքի հիմնադիրն է, ճանաչվեց և սիրվեց աշխարհի գիտական հանրության կողմից»,- ասաց Ժաննա Հովակիմյանը:

Միջոցառման շրջանակում տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ Ա.Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի երկրաբուսաբանության և էկոլոգիական ֆիզիոլոգիայի բաժնի լաբորատորիայի բացումը: Նոր լաբորատորիան ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի աջակցությամբ վերազինվել է նորագույն սարքավորումներով, որոնց կիրառմամբ բուսների ուսանողները կկարողանան կատարել գիտական աշխատանքներ, իսկ գիտաշխատողները՝ իրականացնել միջազգային չափանիշներին համապատասխան հետազոտություններ:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

Հայ-Ճապոնական հնագիտական արշավախմբի պեղումների արդյունքները

«Հայաստանի վաղ պատմական փուլի հնագիտական հետազոտություն» ծրագիրն իրականացվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի և Ճապոնիայի Տոկայի համալսարանի միջև 2017թ. սեպտեմբերի 1-ին կնքված համաձայնագրով: Ծրագրի համադեկավարներն են գիտաշխատող Արթուր Պետրոսյանը և Տոկայի համալսարանի պրոֆեսոր Մ. Արիմուրան: Աշխատանքներն իրականացվում են Ճապոնիայի Գիտության զարգացման ճապոնական ֆոնդի (JSPS KAKENHI Fostering Joint International Research), ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի և «Արենի-1 քարայր» կոնսորցիումի ֆինանսավորմամբ:

Արմավիրի մարզի Լեռնագոգ-1 հնավայրի հետազոտությունները ցույց են տվել, որ Ք.ա. VIII-VII հազարամյակների սահմանին այստեղ ապրել է մի համայնք, որի բնակիչները տիրապետել են վաղ անասնապահությանը և կավաշաղախից շինություններ կառուցելու տեխնիկային: Սա ոչ միայն Հայաստանում, այլև ողջ տարածաշրջանում հայտնի վաղ անասնապահների առաջին կայան-բնակատեղիներից է: Այս իմաստով Լեռնագոգ-1-ի պեղումներն ունեն կարևորագույն նշանակություն Հին աշխարհում առաջին նստակյաց համայնքների հետազոտության գործում:

«Հայաստանի նեոլիթացման գործընթացի ամենակարևոր խնդիրը Լեռնային գոտիներից հայտնի վաղիւլոցենյան հնավայրերի և Արարատյան դաշտի բնակատեղիների միջև փոխհարաբերությունն է: Պետք է նշել, որ ժամանակագրական տեսանկյունից գոյություն ունի որոշակի բաց այս երկու խմբի հնավայրերի միջև: Հայաստանի վաղիւլոցենյան փուլի համար բազային հնավայրերից մեկի՝ Ափնագյուղ 8 (Քմլո-2) քարայրի համար ստացված ռադիոածխածնային տվյալները ցույց են տա-



լիս Ք.ա.11-8-րդ հազարամյակների սահմանը: Հնավայրի համար ստացված ամենաերիտասարդ տարեթիվը Ք. ա. 7400 է: Այս տարեթվի և Արարատյան դաշտի նեոլիթյան բլուր-բնակատեղիներից ստացված տարեթվերի միջև, որոնք թվագրվում են Ք.ա. 6-րդ հազարամյակով, գոյություն ունի 1,000 տարվա ժամանակազրկական դադար: Լեռնագոգ-1 հնավայրում իրականացվող համապարփակ ուսումնասիրությունը նպատակ ունի բացահայտելու այն մշակութային գործընթացները, որոնք հանգեցրին Հայաստանում նեոլիթյան համայնքների առաջացման»,- ասաց գիտական խմբի ղեկավար, գիտաշխատող Արթուր Պետրոսյանը: Հնագետները պարզել են, որ Լեռնագոգում ապրել է մի հա-

մայնք, որը տիրապետել է կավաշաղախից շինություններ կառուցելու տեխնիկային, համազանց, որը գալիս է լրացնելու և փոխելու տարածաշրջանի նեոլիթ-էնեոլիթյան շրջափուլի մշակույթների մասին առկա պատկերացումները և արտադրող հասարակությունների պատմությունը կարող է հետ տանել առնվազն հազար տարով: «Ուսումնասիրության նախնական արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ մենք ժամանակակից Հայաստանի տարածքում փաստագրել ենք միջուկային գոտիներին բնորոշ պարամետրերով առաջին կայան-բնակատեղիներից մեկը, որի տարիքը հաստատվում է բազմաթիվ ռադիոկարբոնային տվյալներով»,- ասաց Արթուր Պետրոսյանը:

Լեռնագոգ-1 հնավայրի պեղումների արդյունքները մասնագիտական հանրությանն են ներկայացվել Հայաստանում, Կիպրոսում, Ճապոնիայում, Իտալիայում անցկացված հեղինակավոր գիտաժողովների ընթացքում:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին



Հայլեհական գիտական համագործակցության հեռանկարներ

Վերջերս Լեհաստանի մայրաքաղաք Վարշավայում ստորագրվեց հուշագիր հնագիտության, հուշարձանապահպանության և թանգարանագիտության ոլորտներում հայլեհական համագործակցության զարգացման վերաբերյալ: Հուշագիրը ստորագրեցին Վարշավայի համալսարանի ռեկտոր Ալյոքի Նովակը, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն Արսեն Բոբոխյանը, ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Պատմամշակութային արժեքների պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի տնօրեն Արմեն Հովհաննիսյանը և «Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան» ՊՈԱԿ-ի տնօրեն Կարեն Փախլանյանը: Միջոցառմանը ներկա էր Լեհաստանում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Ալեքսանդր Արզումանյանը:

Այնուհետև տեղի ունեցավ աշխատաժողով՝ նվիրված երկաթեղարյա Հայաստանի խնդիրների արտադրության, բաշխման և օգտագործման օրինաչափություններին: «Երկրագործությունը և սննդի սպառումը նախապատմական Հարավային Կովկասում» թեմայով հատուկ դասախոսությամբ հանդես եկավ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հնակենսաբանության և էթնոկենսաբանության գիտահետազոտական խմբի ղեկավար Ռոման Հովսեփյանը:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին



ՃԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ ԴԻՊԼԱԾ ՆԱԽԿԻՆ ՌԱԶՄԱԳԵՐԻՆ՝ ՆՈՔԵԼՅԱՆ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ*

նաքի ու թղթի բացակայության պայմաններում սկզբնական շրջանում նա կալիու-մի պերմանգենատի լուծույթով գրառումներ է անում ցեմենտի համար մախատեսված թղթե պարկերի վրա: Ավելին, արխիվում հայտնաբերված հայաստանյան ձեռագրերից պարզվում է, որ նրան հետագայում թույլատրել են գրառումներ անել գրիչով և մատիտով: Իսկ հայտնաբերված դպրոցական տետրերը վկայում են նրա նկատմամբ ճամբարային բժիշկ Յովսեփ Գրիգորյանի բացառիկ վերաբերմունքի և հոգածության մասին:

Ճամբարի ղեկավարությունը կատարում է ևս մեկ անմախադեպ քայլ՝ թույլատրելով Կ. Լորենցին ազատ տեղաշարժվել ճամբարի սահմաններից դուրս: Յերթական մի զբոսանքի ժամանակ նա հանդիպում է հայտնի ճարտարապետ Մարկ Գրիգորյանին, որն այդ ժամանակ Մատենադարանի կառուցման նպատակով զբաղված էր տարածքի ուսումնասիրությամբ (ի դեպ, ռազմագերիները մասնակցել են Չայաստանում բազմաթիվ կառույցների շինարարական աշխատանքներին): Նրանք մտերմանում են, և զրույցի ժամանակ Լորենցն ասում է, որ մինչև պատերազմը զբաղվել է կենդանիների ուսումնասիրությամբ և երազում է վերադառնալ իր սիրած զբաղմունքին: Մ. Գրիգորյանը խոստանում է բարեխոսել ճամբարի ղեկավարությանը և խորհուրդ է տալիս Լորենցին նամակ գրել ակադեմիկոս Լ. Օրբելուն: Նա կատարում է իր խոստումը, իսկ Լորենցը լսում է նրա խորհուրդը և նամակ է գրում Օրբելուն: Ճամբարի ղեկավարությունն այն ժամանակվա չափանիշներով փայլուն բնութագրական նամակ է տալիս նրան, իսկ Լ. Օրբելին միջնորդական նամակ է հղում Ստալինին, որի շնորհիվ Լորենցին ազատում են գերություններից:

Փրկվում են ոչ միայն Լորենցի կյանքը, այլև նրա աշխատանքները: Բժիշկ Յովսեփ Գրիգորյանից Լորենցն իմացավ,


որ իր վաղաժամկետ ազատման համար պարտական է ակադեմիկոս Լ. Օրբելուն: Նրան անգամ հնարավորություն են տալիս մեքենագրելու իր ձեռագրերը:

Կ. Լորենցը մնաց որպես այդ ճամբարի բժիշկ մինչև 1947 թ. սեպտեմբերի 19-ը: Այնուհետև նրան թույլ են տալիս վերադառնալ տուն՝ իր հայրենի Ալթեյ-բուրգ քաղաք (Վիեննայի մոտ): Վերադարձին Կ. Լորենցն իր հետ վերցնում է ձեռագրերն ու տպագրական օրինակը՝ առանց հատուկ գրաքննիչի ստուգման: Անշուշտ, Լ. Օրբելին գիտակցում էր Ստալինին հղած իր նամակի հնարավոր բացասական հետևանքներն իր հետագա գործունեության վրա, բայց գիտականի մեծությունը հենց գիտության շահը վեր դասել է անձնական շահից:

Ակադեմիկոս Լ. Օրբելու դերն իր ճակատագրում ապագա Նորբեյան մրցանակակիր Կ. Լորենցը՝ «կենդանիների հոգիների Այնշտայնը», արտահայտում է շնորհակալագրի միջոցով. «Հարգելի՛ պարոն ակադեմիկոս, ես Ձեզ նամակ գրեցի Չայաստանից: Ես վստահ եմ, որ շնորհիվ Ձեր աջակցության ինձ հնարավորություն տրվեց վերադառնալ ձեռագիրը, շնորհակալություն»:

Չայաստանյան ժամանակահատվածը բախտորոշ նշանակություն ունեցավ Կոնրադ Լորենցի կյանքում: Այստեղ կատարած ուսումնասիրությունները հետագայում հիմք դարձան նրա «Հայելու հակառակ կողմը» աշխատության համար, որը 1973 թ. արժանացավ Նորբեյան մրցանակի:

Նա մշտապես երախտագիտությանը էր հիշում Չայաստանը և հայերին: Իր հիշողություններում Կ. Լորենցը պատմում է, որ մի արևոտ առավոտ կապիտան Կարապետյանն իրեն կանչեց զբոսնելու, տարավ մի հին տուն և ասաց, որ այստեղ է ապրել հայ գրականությանը դասական Խաչատուր Աբովյանը, որը սովորել է Դորպատում, գերազանց տիրապետել է



գերմաներենին, ամուսնացած է եղել գերմանուհու հետ: Չարյուր տարի առաջ նա դուրս է եկել տանից և չի վերադարձել:

Մեծանուն գիտնականին հիշում են նաև Չայաստանում: Երբ նրան շնորհվեց Նորբեյան մրցանակ, Քանաքեռի մասկին ռազմագերիների ճամբարի մոյն կապիտան Կարապետյանը նրան հեռագրեց. «Շնորհավոր, Կոնրադ, հպարտ եմք քեզնով»: 2017 թ. ակադեմիկոս Լ. Օրբելու ծննդյան 135-ամյակի կապակցությամբ Օրբելի եղբայրների տուն-թանգարանն իր հարկի տակ հյուրընկալեց երկու ակադեմիկոսների թոռներին՝ Աբգար Օրբելուն և Ռիկարդո Դրագեր-Լորենցին: Վերջինս իր խորին երախտագիտությունը հայտնեց իր պապի հանդեպ մեր ժողովրդի ցուցաբերած հոգատար և բարյացակամ վերաբերմունքի համար:

Օրբելի եղբայրների տուն-թանգարանում պահպանվող նյութերից բացի, Կ. Լորենցի կյանքին և գիտական գործունեությանն է նվիրված նաև ՀՀ ԳԱԱ Լ. Օրբելու անվ. ֆիզիոլոգիայի ինստիտուտում գործող մշտական ցուցադրությունը: Նորբեյան մրցանակակիր մասին 2014 թ. Երևանում լույս է տեսել Էդգար Ամրոյանի «Արվարձանային լուծություն: Կոնրադ Լորենցի համառոտ կենսագրությունը» գիրքը:

*Ըստ Ռ. Շահիջանյանի «Լոն Օրբելին՝ մեծ հումանիստ» հոդվածի
(«Գիտության աշխարհում», 2024թ., N 1):

«Ժամանակակից ֆիզիկա. հանրամատչելիացման և ուսուցման հիմնախնդիրներ ու լուծումներ» գիտաժողովը

Ս/թ. հունիսի 18-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում մեկնարկեց «Ժամանակակից ֆիզիկա. հանրամատչելիացման և ուսուցման հիմնախնդիրներ ու լուծումներ» խորագրով գիտաժողովը: Այն կազմակերպվել է «Գիտությունը՝ հանրակրթությանը» ծրագրի շրջանակում և մախատեսված է ՀՀ ավագ դպրոցների ուսուցիչների համար:



Հանդիպմանը մասնակցեցին ՀՀ ԳԱԱ մախագահության անդամներ, գիտնականներ ՀՀ գիտական և կրթական հաստատություններից, ՀՀ ավագ դպրոցների ֆիզիկայի ուսուցիչներ:

Միջոցառման մասնակիցներին ողջունեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար, թղթակից անդամ Արթուր Իշխանյանը. «Այսօր գիտությունը թևակոխել է մի այնպիսի ժամանակաշրջան, երբ գիտական արդյունքն այլևս ինչ-որ տեղ գերազանցում է մարդկային երևակայությունը: Գիտությունն ավելի մեծ արագությամբ է զարգանում, և գիտելիքների մշտական թարմացումը և կապն առաջնագծային հետազոտությունների հետ առաջնային է ձեզ

համար՝ որպես առաքյալների, որոնք լույսը պետք է առաքեն աշակերտներին և ընդհանրապես հասարակությանը»:

«Ավագ դպրոցի ուսուցիչները պետք է թելադրող լինեն՝ ինչ ծրագրերով և մեթոդով իրականացնել դասավանդումը, որպեսզի աշակերտը կարողանա որոշել՝ ինչ մասնագիտություն ընտրել: Այս միջոցառման ընթացքում դուք կծանոթանաք ֆիզիկայի ոլորտի վերջին նորություններին, նոր ուղղություններին և նոր հետազոտություններին, որոնք կարող են օգտագործել դասավանդման գործընթացում՝ ավելի գրավիչ դարձնելով ֆիզիկան աշակերտների համար»,- ասաց ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի և աստղաֆիզիկայի բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Ռադիկ Կոստանյանը:

«Ֆիզիկան այն ոլորտն է, որը Չայաստանում ունեցել է լավ ավանդույթ», և մենք ցանկանում ենք շարունակել այդ ավանդույթը»,- նշեց ՀՀ ԳԱԱ մախագահի գիտության և տեխնոլոգիաների գծով տեղակալ Վարդան Սահակյանը:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրամատչելիացման և զարգացման ծրագրերի վարչության պետ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կամո Աթայանը ընդգծեց գիտության հանրամատչելիացման կարևորությունը: «Մեր նպատակն է գտնել մեթոդներ, որոնք կնպաստեն Չայաստանում գիտության և կրթության սերտացմանը: Ֆիզիկայի ոլորտում մենք միշտ ունեցել ենք հաջողություններ: Այսօր հետաքրքրությունը որոշակի անկում է ապրում, և փորձում ենք հանրամատչելիացման միջոցով հաղթահարել այդ անջրպետը: Դրա իրականացմանը ուսուցիչներն են: Մենք առաջարկել ենք ստեղծել ֆիզիկայի ուսուցիչների ասոցիացիա, մի հարթակ, որտեղ կարող են բարձրացվել հարցեր, և առաջարկվել փոփոխություններ»,- ասաց Կամո Աթայանը:



Գիտաժողովի երկրորդ մասն անցկացվեց Արտեմ Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիայում: Քառօրյա գիտաժողովի ընթացքում առաջատար գիտնականները Չայաստանի և արտերկրի գիտական և կրթական հաստատություններից հանդես եկան զեկուցումներով՝ նվիրված ֆիզիկայի զարգացման ժամանակակից միտումներին, ժամանակակից աստղաֆիզիկային, ըվանտային ֆիզիկային, ակուստաֆիզիկային, ատոմային և միջուկային ֆիզիկային:

Հունիսի 19-ին գիտաժողովի աշխատանքները շարունակվեցին ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտում, հունիսի 20-ին՝ Հայկական ատոմային էլեկտրակայանում, իսկ հունիսի 21-ին՝ ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտում: Հունիսի 21-ին ամփոփվեցին գիտաժողովի աշխատանքները, և մասնակիցները ստացան վկայագրեր:

Գիտաժողովը կազմակերպել էին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան, ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտը, ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտը: «Գիտությունը՝ հանրակրթությանը» ծրագրին աջակցում են Արտեմ Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիան և «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի տնօրենի պաշտոնում վերընտրվեց Արմեն Սարգսյանը

Սույն թվականի հունիսի 19-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստում ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի տնօրենի պաշտոնում վերընտրվեց Արմեն Սարգսյանը:

Արմեն Սարգսյանը ծնվել է 1986 թ.: 2008 թ. ավարտել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը: 2011 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2015 թ. ստացել է իրավագիտության մագիստրոսի աստիճան:

Իր աշխատանքային ուղին Արմեն Սարգսյանը անցել է ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնում՝ լինելով համակարգչային լաբորատորիայի ղեկավար, ցանցային ադմինիստրատոր, ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի ուսումնական մասի պետի տեղակալ, Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ: 2020 թ. դեկտեմբերից Արմեն Սարգսյանը ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի տնօրենն է:

Արմեն Սարգսյանը ներկայացրեց ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի 2024-2028 թթ. զարգացման ռազմավարական ծրագիրը: Կենտրոնի տեսլականն է դառնալ գիտական ստեղծարար միջա-



վայր ապահովող և նորարարություններով առաջնորդվող հետազոտական համալսարան՝ խթանելով հետազոտահեն կրթության, գիտության, արտադրության, արտադրության ներդրման և արդյունավետ փոխգործակցությունը:

Կենտրոնի նպատակներից է գիտության և կրթության շաղկապումը, հետազոտահեն կրթության իրականացումը:

Նախատեսվում է հետազոտահեն կրթության կազմակերպման հա-

մար անհրաժեշտ միջավայրի և ենթակառուցվածքների շարունակական արդիականացում և կատարելագործում, մագիստրոսական ծրագրերի հետազոտական բաղադրիչի մասնաբաժնի ավելացում, մագիստրոսական թեզերի թեմաների շաղկապում կենտրոնում և ԳԱԱ համակարգի ինստիտուտներում իրականացվող գիտական թեմաներին, գիտական ծրագրերում ուսանողների, ասպիրանտների մասնակցության խթանում, աշխարհի առաջատար գիտակրթական կենտրոնների հետ համագործակցային կապերի ընդլայնում և համատեղ ծրագրերի իրականացում:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

«Լավագույն գիտական աշխատանք» մրցույթի հաղթողները

Ս/թ. հունիսի 15-ին տեղի ունեցավ «Լավագույն գիտական աշխատանք» մրցույթի մրցանակաբաշխությունը:

Մրցույթը երիտասարդ գիտնականների համար (մինչև 45 տարեկան) հայտարարել էին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան և Ռուսաստանի հայերի միությունը: Մրցույթով սահմանվել էին 1-ին և 2-րդ կարգի մրցանակներ 4 անվանակարգերում՝ 2021-2023 թվականներին հրապարակված գիտական հոդվածների, հոդվածների շարքի, մեկազրույթությունների կամ արտոնագրված աշխատանքների համար: Մրցանակային ընդհանուր ֆոնդը 8 միլիոն դրամ է:



«Ֆիզիկամաթեմատիկական և տեխնիկական գիտություններ» անվանակարգում 1-ին կարգի մրցանակ է շնորհվել ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտից Արմեն Սարգսյանին: 2-րդ կարգի մրցանակ են ստացել Երևանի պետական համալսարանից Տիգրան Աբրահամյանը և ՀՀ ԳԱԱ մաթեմատիկայի ինստիտուտից Արմեն Վաղարշակյանը:

«Քիմիա և Երկրի մասին գիտություններ» անվանակարգում 1-ին կարգի մրցանակը շնորհվել է ՀՀ ԳԱԱ օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնից Էլմիրա Հակոբյանին: 2-րդ կարգի մրցանակը ստացել է Երևանի պետական համալսարանից Գոհար Շահինյանը:

«Կյանքի մասին գիտություններ» անվանակարգում 1-ին կարգի մրցանակին արժանացել է ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտից Արսեն Առաքելյանը: 2-րդ կարգի մրցանակը ստացել է Երևանի պետական համալսարանից Կարեն Թռչունյանը:

«Հայագիտություն և հասարակական գիտություններ» անվանակարգում 1-ին կարգի մրցանակը ստացել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտից Հայկ Հակոբյանը: 2-րդ կարգի մրցանակը շնորհվել է ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտից Մերի Սարգսյանին:

Մրցանակակիրները պարգևատրվել են դրամական պարգևներով և արժանացել են ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի և Ռուսաստանի հայերի միության պատվավոր դիպլոմների:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

1896 թ. ՎԱՆԻ ՀՈՒՆԻՍՅԱՆ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԸ

Հայ ժողովրդի ազատագրական պայքարի վառ էջերից է Վան քաղաքի հայության մղած ինքնապաշտպանությունը, որը տեղի ունեցավ 1896թ. հունիսի 3-ից 10-ը: Ինքնապաշտպանության նախաձեռնողն ու կազմակերպիչն էր Արմենական կուսակցությունը, որը ձևավորվել էր Վան քաղաքում 1885 թվականի աշնանը: Արմենականների առաջնորդը՝ փորձառու մտավորական Մկրտիչ Ավետիսյանը, նաև կատարելապես տիրապետում էր զենքին ու զինվորական գործին: Հենց նրա ջանքերով գծագրվել էին ինքնապաշտպանության սխեման ու սցենարը: Քաղաքում կառուցվել էին 33 պաշտպանական դիրքեր, որոնք սահմանակից էին թուրքական թաղամասերին: 1896 թ. հունիսի 3-ին սկսվում են մարտական թեժ գործողությունները: Արմենականների հետ հաշտ և համախորհուրդ գործում են Հնչակյան և Դաշնակցություն կուսակցությունների՝ Վանի պատասխանատու գործիչները՝ Մարտիրոս (Մարտիրոս Սարուխանյան) և Պետրոսի (Ալեքսանդր Պետրոսյան) գլխավորությամբ:

Ինքնապաշտպանությունը կազմակերպված էր մարտավարական լավագույն սկզբունքներով: Թուրքական կանոնավոր ուժերի և քրդական խաժամուժի գրոհները հետ էին մղվում նրանց համար ծանր կորուստներով:

Հայոց ինքնապաշտպանական ուժերի հաջող գործողությունները տագնապ են հարուցում թուրքական իշխանություններին և նրանց հետ սերտորեն համագործակցող Վանի անգլիական փոխհյուպատոս Ուիլյամսին, որն այդ օրերին հակահայ իր կեցվածքն առավել շեշտադրեց: Վերջինս մտավախություն ուներ, որ ինքնապաշտպանության շարունակվելու դեպքում այն առիթ կտա հարևան ռուսական տերությանը ռազմական միջամտության դիմելու:

Այդ նպատակով հյուպատոսը սուլթա-



նի բանագնաց Սաադեդդին փաշայի հետ նախաձեռնում է բանակցություններ ինքնապաշտպանության ուժերի ղեկավարության հետ: Քանի որ Վանի պաշտպանների ռազմամթերքը սպառվելու վրա էր, ուստի նրանք համաձայնվում են դուրս գալ քաղաքից՝ զենքը ձեռքին, և ուղևորվել չեզոք երկիր: Անգլիական փոխհյուպատոսը երաշխավորում էր, որ ինքնապաշտպանական խմբերը չեն հետապնդվելու թուրքական ու քրդական ուժերի կողմից, և անպաշտպան մնացած քաղաքում կուտորածներ չեն լինելու:

Հունիսի 10-ին ինքնապաշտպանական խմբերը, անհրաժեշտ մարտակարգ պահպանելով, քաղաքից դուրս գալով, շարժվեցին դեպի պարսկական սահմանագլուխ: Սակայն ճանապարհի հենց սկզբից նրանք հետապնդվեցին թուրքական և քրդական ուժերի կողմից: Թուրքական իշխանությունները մանրամասն մշակել էին հայ ինքնապաշտպանական խմբերի ոչնչացման ծրագիրը: Խանասորի դաշտում տեղի ունեցավ այդ ողբերգական դրամայի վերջին արարը:

Բոլոր կողմերից շրջապատված հայկական ուժերը, մարտնչելով իրենց բազմապատիկ գերազանցող թշնամու դեմ, այնուամենայնիվ, չկարողացան ճեղքել

պաշարման օղակը և անցնել Պարսկաստան: Ինքնապաշտպանական ուժերի մարտիկների մեծ մասը զոհվում է հանասորի դաշտում, մյուս մասը՝ Զուխում և Գարահիսարում:

Ահա այսպիսի տխուր, ողբերգական ճակատագիր ունեցան Վանի՝ 1896 թ. հունիսյան ինքնապաշտպանության մասնակիցներն ու ղեկավարները, որոնք, հավատալով անգլիական և ֆրանսիական հյուպատոսների հրապարակային երաշխավորություններին, հիմք ընդունելով նրանց տված պաշտոնական խոստումները, դադարեցրին կռիվները և դուրս եկան քաղաքից:

Ավելին, ինքնապաշտպանական ուժերի հեռանալուց հետո թուրքական իշխանությունները ջարդեր կազմակերպեցին քաղաքում մնացած հայ ազգաբնակչության հանդեպ: Ահա այսպիսին էին եվրոպական դիվանագիտության խոստումների գինն ու արժեքը՝ ընդամենը օդում անեացած դատարկ պղպջակ...

Վանի ինքնապաշտպանության գլխավոր դասն այն է, որ ժողովուրդը միշտ պետք է ապավինի սեփական ուժերին:

Արմեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

ՕՏԱՐՆԵՐԸ ՄԵՐ ՄԱՍԻՆ

Երկրագնդի երեսին չկա այլ երկիր, որն այսքան հագեցած լինի հրաշքներով, ինչպես հայերի երկիրն է...

ՋՈՐՋ ԲԱՅՐՈՆ

Հայերը քրիստոնյա քաղաքակրթության հնագույն ժողովուրդներից են, աշխարհի ամենախաղաղասեր, նախաձեռնող և խոհեմամիտ ազգերից մեկը:

ՖՐԵՂԵՐԻԿ ՀՈՊԵՆ

Ինձ համար դժվար է հավատալ, որ որևէ մեկը կարող է ծանոթանալ այս նշանավոր ժողովրդի պատմությանը՝ առանց խորապես ցնցվելու հայերի մեծ ողբերգությունից:

ՖՐԻՏՅՈՆ ՆԱՆՍԵՆ

Հայաստանը քաղաքակրթության օրրան է, Հին աշխարհի առաջատար և զարգացած երկրներից մեկը:

ՖՐԱՆՑ ՎԵՐՅԵՆ

Հայ ժողովուրդը տարբերվում է կենսասիրությամբ, տոկունությամբ, սեփական ճշմարտության հանդեպ ունեցած վստահությամբ, կամքով: Հենց այս որակների շնորհիվ այն մշտապես հաղթանակած է դուրս գալիս ցանկացած փորձությունից:

Նրա պատմությունն ամենախորհրդավոր պատմությունն է բոլոր ժողովուրդների կյանքի մեջ:

ԷՄԻՆ ՎԵՐՅԱՐՆ

Հայաստանը ողջ մարդկության հոգևոր կյանքի կենտրոններից մեկն է:

ՎԱԼԵՐԻ ԲՐՅՈՒՄԿ

Հայաստանը հրաշքների երկիր է... Եթե ինձ հարցնեն, թե մեր մոլորակի վրա որտեղ կարելի է հանդիպել մեծ հրաշքների, ես, առաջին հերթին, կնշեի Հայաստանը... Ակամա ապշում ես, որ աշխարհի այս փոքրիկ հատվածում հնարավոր է հանդիպել այնպիսի կոթողների ու այնպիսի մարդկանց, որոնք կարող են լինել ողջ աշխարհի զարդը: Եռակի օրհնյալ եղիր, Հայոց աշխարհ՝ տաղանդների հայրենիք, հսկայական արարչագործությունների բնօրրան:

ՈՐԲՈՒԵԼ ՔԵՆՏ

ՄՏՔԵՐԻ ՀԱՐԹԱԿ



Ինչո՞ւ եմ գրում այս ամենը. չգիտեմ. գիտեմ միայն, որ հոգու ցավը, անվերջ նվկացող մրմուռը հավանաբար պետք է ինչ-որ ձևով դուրս թափվի, որ հնարավոր լինի ապրել: Թե չէ ապրել չի ստացվում:

Ես կարծում էի՝ մեր ողբերգությունը միայն վատ հարևաններն են, բայց պարզվեց՝ մենք ունենք նաև դարերից եկող ու շարունակական շատ լուրջ խնդիր՝ տնամերձի հոգեբանությունը, իմը՝ մեծ, շքեղ, բարձր պարսպով, խնամված տա-րածքով, իսկ պարսպից դուրս՝ թեկուզ աղբամոց: Ու այդպես էլ մեր փոքրացած երկիրը մերը չդարձավ:

Ու տարեցտարի իմ հայրենիքում ամոթ-թը հիմնավոր փակվեց պահոցում, իսկ բանալին կորավ... Իսկ մեր երկրում աննկատ հաստ սարդոստայն էր հյուսվում՝ նոր «արժեհամակարգ» էր ձևավորվում... Ու արժեքն արդեն հայրենիքն ու գրողը չէր, մեր լեզուն ու մեր հերոսը չէր, արժեքը լատինատառ խանութներն էին, էժանագին «աստղերը», մեքենայի համա-րանիշը, մեծ ու ամճաշակ դոյակը, ան-ճռնի խոսելը, էժանագին հեռուստաթե-րը, թատերականացված հարսանիքն ու կնունքը, սարքած քիթն ու բերանը...

Ու մենք հիմնավոր մոռացանք, որ ան-կախությունն ու հաղթանակը նվեր չէին, և հնարավոր էր դրանք կորցնել:

Հա՛, մի «շքեղություն ու ճոխություն» էլ կա մեր երկրում՝ մեր բազմաթիվ կու-սակցությունները, հին ու նոր, նոր ու նո-րագույն, «ազգափրկիչ» գաղափարնե-րով ու անձնական նե՛ղ շահերով: Յուրա-քանչյուր ընտրությունից առաջ դրանք հայտնվում են, նոր ցուցակներ են սար-քում, միանում ու բաժանվում, ճառում են ու խոստումներ տալիս... ու ամենա-կարևորը՝ ընդդիմություն են խաղում: Ով-քե՞ր են, ինչի՞ են հայտնվել, հանում ո՞ր գաղափարի:

Անտանելի է: Ա՛յ ձեր տունը շինվի՝ կա-սեր մեծն Թումանյանը, բա մենք ձեզ հեշ չե՞նք ճանաչում, բոլորիդ էլ տեսել ենք, չե՞, գիտենք, ո՞ր եք ձեզ կոտորում: Մի հարցնող լինի՝ եթե կուսակցությունը որո-

շակի գաղափարախոսություն է, ապա տեղից տեղ անվերջանալի տեղաշարժը ինչո՞վ եք բացատրում, դուք եք փոխ-վո՞ւմ, թե՞ գաղափարները, կամ, որ միա-նում եք, ինչի՞ շուրջ... Դուք ձեզ հավա-տո՞ւմ եք:

Այսօր մեր իրական վիճակը տեսնե-լով՝ բոլորի մոտ մի գաղափար պետք է լի-նի՝ ոնց երկիրը փրկենք մեզմից... որով-հետև մենք մեր ձեռքով, օրը ցերեկով, մեր հայրենիքը, մեր միմուճարին վարի ենք տալիս...

Ազգի մի մասը, փողը Աստծու տեղ պաշտելով, ոչինչ չի տեսնում, մյուս մա-սը, սեփական երկրի սև ապագայի «տես-լականը» աչքի առաջ, մտածում է երկրից

ԽՆՎԱՐ ԱՊԱԳ-ԱՅԻ «ՏԵՍԼԱԿԵՆԸ»

գնալու մասին, իբրև զավակի «ապագան փրկելու», մի մասն էլ մի կերպ օրվա հացն է վաստակում՝ հայիոյելով ու անի-ծելով... Ճան մի հատված էլ կա, որ լրիվ հոգեկան հիվանդի «զգոնությամբ» ամեն օր սպասում է սահմանին հերթական զո-հի մասին լուրին ու գժվում:

Շատ հետաքրքիր է՝ մեր ժողովրդի ո՞ր հատվածն է հասկանում, որ հայրենիքը իր սեփական տունն է, որ նախ պետք է խնամքով սարքել, իսկ հետո անդադար վերանորոգել, որ հանկարծ կտուրը չկա-թի...

Իսկ մենք ի՞նչ ենք անում. ամխնա գո-ղանում ենք մեր սեփական տան պատու-հաններն ու դռները, մեկ էլ փախչում ենք մեր տնից, արագ-արագ, որ հանկարծ փլվելիս տակը չմնամք:

Հիմա եմ հասկանում, որ դեռ այն ժա-մանակ, երբ պատերազմի դաշտում մեր ջախելները զոհվում էին, մեր կողքին սարքվող անքանակ դղյակների տերերն արդեն մեր ապագան էին հարամում: Ո՞նց չհասկացանք, որ դա սկիզբն էր մեր ապագայի պարտության:

Եկավ չարաբաստիկ 2018-ը... Ի՞նչ էր դա, էդ թավիշ անուճով դավադրությունը, ո՞նց եղավ, ո՞վ արեց, ի՞նչ ծրագիր էր, ի՞նչ մտածված, մանրամասն մշակված գործընթաց էր: Սակայն շատ շուտով խորհրդանշական թավիշը սրընթաց ա-րագությամբ դարձավ ընդամենը խաբ-կանքի շքեղ ծածկոց:

Հետո՞... ամենայն հավանականությամբ սկսվեց հենց սկզբից նախագծված ծրագրի քայլ առ քայլ իրականացումը. ժողովուրդն արագությամբ բաժանվեց երկու թշնամական մասի՝ սևերի ու սպի-տակների, հավանաբար, որ հետո չհա-մախմբվեն իրենց դեմ, ապա «թշնամի հների» դեմ անվերջանալի քարոզ ու ա-տելության սերմանում, որ հիմնավոր նրանք ջնջվեն տեսադաշտից, մանր, է-ժանագին շուռներ՝ նախկինների թալա-նածը հետ բերելու իմիտացիայով, հար-

ձակում եկեղեցու վրա, որ հետո ժողո-վուրդը եկեղեցու շուրջ չհամախմբվի, նաև անվերջանալի անբովանդակելիությ-ներ: Հետո... ճա պարեց Շուշիում, ճվաց, որ Ղարաբաղը Հայաստան է և վերջ...

Երկրում ինչ-որ անհասկանալի բան էր կատարվում: Ինքնասիրահարված, զրո կենսագրությամբ, անհասկանալի մասնագիտություններով, բայց անչափե-լի հավակնություններով պաշտոնյա-ներ... Ով ինչ ուզում էր, դուրս էր տալիս՝ ո՛չ ամոթ, ո՛չ պատասխանատվություն: Իսկ ամենավատը՝ սուտը, սուտը, որ իշ-խում էր անարգել ու հաղթական: Իսկ ֆեյսբուք կոչվածում՝ միայն զայրույթ, քննադատություններ, մաղձ, անեծք, ան-պատվություն ու հայիոյանք:

Որտեղի՞ց այսքան չարություն, այս-

մենայնիվ «զահից» կառչած վարչապետ կոչվածը դուրս եկավ ընտրապայքարի: Նա, մի ամբողջ ժողովրդի բացարձակ հի-մարի տեղ դրած, անվերջ անհեթեթ ե-լույթներ էր ունենում, իսկ ապիկար ու ան-մակարդակ Ազգային ժողովի ՔՊ-ական մեծամասնությունը, որ պատերազմից հե-տո անգամ շարունակում էր խոշոր պարզապաշարներ ստանալ հազար ու մի կարիքի մեջ խեղդված երկրում, ամանոթ հրճվանքով ծափահարում էր:

Ու ականա հիշում ես Երվանդ Օտյա-նի «Ընթացիկ բառարանը», որ ասես այ-սօր է գրվել. «Երեսփոխան ժողով-Ազգա-յին շահերու և արժանապատվության գե-րեզմանատուն»:

Հետաքրքիր է, այսպես կոչված «հնե-րը» գոնե հիմա հասկանո՞ւմ են, թե ինչ են

արել, ոնց են զգվեցրել, ինչ ատելության են արժանացել, որ ժողովրդի մի մասը համաձայն է ամեն ահասարսուռ տարբե-րակի, միայն թե իրենք չգան: Գոնե խղճի խայթ ունե՞ն... հասկանո՞ւմ են, որ իրենց «շնորհիվ» մեր անկախությունն ամփոփ-վեց ընդամենը մեկ գործառույթով. մի խումբ անհայրենիք կենդանիներ անխնա հարստացան... ու վերջ:

Պատերազմի վերջը շատ էր ցավոտ... Ծածանվող դրոշներով եռաբլուրը, մեր անմեղ զոհերի նկարները դարձել էին կյանքի ուղեկից... բայց պարզվեց՝ ամեն ինչ դեռ ավարտված չէ...

Թուրքը մտավ մեր երկիր ու... մնաց: Սկսվեց լրիվ անհասկանալի մի բան... զորք չկա, կռվող չկա, կա անքանակ ոս-տիկանության հետևում թաքնված ողոր-մելի ղեկավարություն ու պահանջատեր թուրք՝ արդեն մեր հողերի համար:

Զգիտե՛ի՝ ինչ դաժան բան է, երբ եր-կար ժամանակ հողիդ տնքում է ցավից ու անզորությունից: Իրականում հայրենիքս անհասկանալի վիճակում է. սահմաննե-րը՝ բաց, թուրքը՝ մեր հողի վրա, կամակա-տար մի ղեկավար, որ չգիտես ում ջրա-դացին է ջուր լցնում...

Բայց ամենասարսափելին այսօր ժո-ղովուրդ ասվածն է՝ հիմնավոր անջատ-ված վիճակ, միակ արտահայտման հար-թակը՝ ֆեյսբուքը, քննարկում են, հայիո-յում են, ողբում են... այն տպավորու-թյունն է, որ այս հողի վրա չեն ապրում, այլ վիրտուալ մի աշխարհում, ու քննարկման է դրված ինչ-որ մի հեռու ու անկապ երկրի լինելության հարցը...

Ի՞նչ է կատարվում. չես հասկանում, ո՞ր եք զենո՞ւ պարզ չի, ի՞նչ ծրագիր ու ի՞նչ նպատակ ունեն այս իշխանություն-ները՝ որևէ կերպ ընթռնել անհնարին է:

Ես գոնե այլևս ի վիճակի չեմ ինչ-որ բան ընկալել...

Լիլիթ ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր

Բառերի պատմությունից

ՈՒՐ Է ՏԱՆՈՒՄ ԿԱԼԵՆԴԱՐԸ

Կալենդար բառը գործածական է եվ-րոպական լեզուներում և ռուսերենում. այն նշանակում է՝ 1. օրացույց (սեղանի օրացույց), 2. տարեցույց (հեղափոխա-կան տարեցույց), 3. տոմար (Գրիգորյան տոմար), 4. օրացուցակ (սպորտային մրցությունների օրացուցակ) և այլն: Հմմտ. անգլ. **calendar**, գերմ. **Kalender**, ֆրանս. **calendrier**, ռուս. **календарь** և այլն:

Անգլերենում **calendar** նշանակում է նաև 1. օրակարգ, 2. իրավաբ. լսումների համար պատրաստված գործերի ցուցակ: Գերմաներենում՝ նաև «ալմանախ» և այլն:

Իսկ ի՞նչ է նշանակել կալենդար-ն ի սկզբանե, և ո՞ր լեզվից է այն անցել մյուս լեզուներին:

Այն ծագում է լատիներենից՝

calendae. Հին Հռոմում այդպես էր կոչ-վում ամսվա առաջին օրը: Լատ. **calendae** բառն էլ ծագում է **calo** «կոչել» բայից:

Հունարենը վերցրել է լատիներենից **calendai** ձևով՝ «ամանոր» իմաստով. ա-հա այս բառն էլ փոխառել ենք մենք՝ հա-յերս, որ ենթարկվելով հնչյունական փո-փոխությունների՝ տվել է **կաղանդ** ձևը՝ «ամսամուտ, ամսազլուխ, տարեզլուխ» իմաստներով: Ժամանակի ընթացքում այն իմաստափոխվել է և այժմ միայն նշանակում է «ամանոր, տարեզլուխ»: Հմմտ. վրացերեն՝ **կալենդոբա** («ամսա-մուտ»), **կալանդա** («կաղանդ»), հին սլավ. **Kalendu** («Նոր տարի»), բուլղար. **Koleda** («Ժննդյան տոն») և այլն: Անցնե-լով փոխառու լեզուների՝ **calendae > calendarium** բառը ավելի մասնավոր

նշանակություններ ձեռք բերեց՝ ապրելով իմաստային տարաբնույթ զարգացում-ներ: Ինչպես տոմար կամ օրացույց՝ «ժա-մանակի հաշվարկման համակարգ, որ հենվում է բնության երևույթների պարբե-րականության վրա». հմմտ.՝ արևային, լուսնային օրացույց կամ տոմար:

Տոմարագիտության բնագավառում տարբերվում են՝ **Հուլյան տոմար** («Հին տոմար»)՝ տարիների հաշվարկման հա-մակարգ (կիրառվել է Հուլիոս Կեսարի օ-րոք՝ մ.թ.ա. 46թ.), հաշվարկում էին երեք տարի՝ 365 օրով, և չորրորդ (նահանջ) տարի՝ 366 օրով: Հուլյան տոմարը ճշգրիտ արևային տոմարից 128 տարում հետ էր ընկնում 1 օրով: **Գրիգորյան տո-մար** («Նոր տոմար»). 1582 թ. սահմանվել է Գրիգոր XIII պապի կողմից: Նա հաշ-վարկը 10 օրով առաջ է տանում, որպես-զի վերացնի Հուլյան տոմարի կուտակած սխալները: Գրիգորյան տոմարը ճշգրիտ

արևային տոմարից 3280 տարում հետ էր ընկնում 1 օրով:

Տարբերակում են նաև՝ **աստղաբաշ-խական տոմար** (астрономический календарь). հրատարակվում է ամեն տարի և աղյուսակով ցույց է տալիս երկ-նային լուսատուների (Արևի, Լուսնի, մո-լորակների, աստղերի և այլն) փոփոխ-ված դրությունը, ինչպես նաև արձանագ-րում է տարաբնույթ աստղագիտական երևույթներ (Արևի, Լուսնի խավարումը և այլն):

Ահա թե ուր է տանում **կալենդարը**. Երկրից դեպի տիեզերք և վերադարձ նախնական իմաստին՝ «ամանոր»-ին, ո-րով էլ սկսվում է տոմարի (календарь) ա-ռաջին օրը:

Լալիկ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր



Քննարկվեցին Սևանա լճի հիմնախնդիրները

Ս/թ. հունիսի 7-ին ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնում տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ կենսաբազմազանության և կենսաանվտանգության պրոբլեմային խորհրդի նիստը: Քննարկվեցին Սևանա լճի հիմնախնդիրները:

«Սևանա լիճը մեզ համար օրինակ է, թե ինչպես չի կարելի վարվել բնության հետ»,- իր ողջույնի խոսքում ասաց ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ռուբեն Հարությունյանը:

ՀՀ ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի նախագահ Բարդուխ Գաբրիելյանը խոսեց Սևանա լճի մակարդակը 6 մետրով՝ մինչև 1903,5 մ միջը բարձրացնելու անհրաժեշտության մասին, ինչը պետք է նպաստի հիպոլիմնիոնի շերտի ձևավորմանը և Սևանա լճի ջրի որակի բարելավմանը:

«Մեծ Սևանում մեծամասամբ չկա այդ շերտը: Եթե մենք բարձրացնում ենք լճի մակարդակը 6մ-ով, առաջանում է հիպոլիմնիոնի շերտ, որի շնորհիվ մենք կունենանք բավականին լավ ջրի որակ և չենք ունենա կապտականաչ ջրիմուռներով բուռն ծաղկում», - ասաց Բարդուխ Գաբրիելյանը:

Նա նշեց, որ ամբողջ աշխարհում ջրամբարները ծերանում են, այդ թվում՝ Սևանա լիճը: «Ի՞նչ է լճի ծերանալը: Երբ կենդանական և բուսական աշխարհի ներկայացուցիչները մահանում են, իջնում են հատակին, ապա հատակը սկսում է մոտենալ մակերեսին, և հիպոլիմնիոնի շերտը կամաց-կամաց վերանում է, լիճը մահանում է: Փաստորեն, երբ 1930-ական թվականներին սկսեցին իջեցնել Սևանա լճի մակարդակը, մենք արհեստական-

րեն արագացրինք այդ գործընթացը՝ մոտեցնելով լճի մակերեսը հատակին», - ասաց Բարդուխ Գաբրիելյանը:

Անդրադառնալով լճի կենսառեսուրսներին՝ նա նշեց, որ Սևանա լիճն ունեցել է 3 էնդեմիկ ձկնատեսակ՝ իշխանը, կողակը և բեղաձուկը, որոնք գրանցված են ՀՀ կենդանիների կարմիր գրքում: Ներկայումս լճում առկա է 9 տեսակի ձուկ, որոնցից միայն 3-ը՝ իշխանը, սիգը և կարասն են արդյունագործական նշանակություն ունեցող տեսակներ:

Զկնապաշարների վրա, ի թիվս այլ պատճառների, իրենց ազդեցությունն ունեն Սևանա լիճ թափվող գետերի վրա կառուցված փոքր հէկերը: Դրանք էկոհամակարգին կարող են էական վնաս տալ: Խողովակով ջուրը հոսելիս փոխվում են ջրի արագությունը, ջերմաստիճանը: Իսկ եթե ջերմաստիճանը փոխվում է, փոխվում է ամեն ինչ՝ կերային բազան, մույնիսկ ձկների բնագոյը:

Սևանա լճում կտրուկ նվազել են խեցգետնի պաշարները՝ արգելված որսագործիքներով իրականացված որսի և խեցգետնիների շրջանում տարածված հիվանդության պատճառով, մինչդեռ խեցգետնիները լճի սամիտարն է, որը սնվում է դետրիտով, մահացած կենդանիներով՝ մաքրելով լիճը:

Բանախոսը նշեց, որ լճի վրա իր ազդեցությունն ունի նաև կլիմայի փոփոխությունը: «Կլիմայի փոփոխության ազդեցության դեմ մենք չենք կարող պայքարել, բայց մենք կարող ենք մեղմել այն: Առաջին հերթին անհրաժեշտ է նվազեցնել ջրառը Սևանա լճից, իսկ դրա համար պետք է ունենալ այլընտրանքային ջրի պաշարներ՝ կառուցելով ջրամբարներ: Պետք է նվազեցնել ոռոգման ջրի կորուստները: Պետք է ապահովվի ջրի ներհոսքը լիճ նաև իր ջրահավաք ավազանից: Սևանի ավազանի որոշ գետեր ամբողջովին չորանում են ամռան սեզոնին», - ասաց Բարդուխ Գաբրիելյանը:

Նա նշեց, որ ՀՀ կառավարությունը պետք է ունենա Սևանա լճի զարգացման ռազմավարություն, որը պետք է արտահայտի կարճաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում լճի գերիշխող տեսլականը: Դրանից ելնելով՝ պետք է իրականացվեն համապատասխան միջոցառումներ՝ կապված լճի էկոհամակարգի և ջրի որակի բարելավման հետ: Բոլոր եզրակացությունները Սևանա լճի է-

կոհամակարգի վերաբերյալ պետք է գիտականորեն հիմնավորված լինեն համապատասխան մասնագիտացված պետական կառույցների կողմից:

ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի փոխտնօրեն Գոռ Գևորգյանը ներկայացրեց Սևանա լճի ջրիմուռների ծաղկման խնդիրը: Նա նշեց, որ 1940-ական թվականներին ֆիտոպլանկտոնում գերակայել են դիատոմային ջրիմուռները, առկա է եղել կանաչ ջրիմուռների սուր գերակայություն, իսկ կապտականաչ ջրիմուռները՝ ցիանոբակտերիաները, ամենափոքր մասն են կազմել: Սակայն լճի մակարդակի իջեցմանը զուգընթաց դիատոմայինների դոմինանտությունը նվազել է, իսկ 1970-ական թվականներին այն արդեն անցել է ցիանոբակտերիաներին:

«Հայտնի է, որ ցիանոբակտերիաների որոշ տեսակներ կարող են արտադրել տոքսիններ: Մեր հետազոտությունները հաստատել են, որ այս ծաղկող տեսակը տոքսիկ է», - ասաց Գոռ Գևորգյանը: Նա նշեց, որ ծաղկման շրջանում ցանկալի չէ Սևանա լճի ջրի օգտագործումը որևէ նպատակով: «Ոռոգման ժամանակ մույն թույները կարող են գյուղատնտեսական մթերքում կուտակվել և անցնել մարդու օրգանիզմ», - ասաց նա:

Ուսումնասիրության արդյունքները փաստում են, որ շարունակական աղտոտումը և գլոբալ տաքացումը կնպաստեն լճի ցիանոբակտերիաների անբարենպաստ զարգացումներին նաև ապագայում: «Ֆոսֆատի ներթափանցման կրճատումը միակ գործիքն է ցիանոբակտերիաների նման անբարենպաստ դինամիկան երկարաժամկետ վերահսկելու համար», - ասաց Գոռ Գևորգյանը:

Ելույթներով հանդես եկան ՀՀ ԳԱԱ էկոլոգամոնոֆերային հետազոտությունների կենտրոնի տնօրեն Լիլիթ Սահակյանը, Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտի տնօրեն Էվելինա Ղուկասյանը և ՀՀ ԳԱԱ Ա.Թախտաջյանի անվ. բուսաբանության ինստիտուտի ծրագրի համակարգող Գրիգորի Ֆյոդորովը:

Խորհրդի նիստի արդյունքներով մշակվելու է առաջարկությունների փաթեթ, որը կներկայացվի ՀՀ կառավարությանը:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

ՀՀ ԳԱԱ հատուկ նշանակության հիմնախնդիրների պրոբլեմային խորհրդի նիստը

Ս/թ. հունիսի 7-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ հատուկ նշանակության հիմնախնդիրների պրոբլեմային խորհրդի անդրանիկ նիստը: Քննարկվեցին մասնակցեցին խորհրդի անդամները ՀՀ ԳԱԱ ինստիտուտներից, Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիայի մասնագետները, «Լոկատոր» ՓԲԸ և «ԼՏ-ՊԻՐԿԱԼ» ՓԲԸ ղեկավարները:

Քննարկվեցին գիտական կազմակերպությունների, բուհերի և ռազմարդյունաբերական համալիրի ձեռնարկությունների միջև գիտատեխնիկական համագործակցության, պաշտպանունակության ամրապնդմանը նպաստող գիտական ուղղությունների վերահաման և ներդրումային ծրագրերի ձևավորման, փորձագիտական խորհրդատվության վերաբերյալ հարցեր:

Խորհրդի գործառնությունները ներառում են.

- Հանրապետության պաշտպանունակության ամրապնդմանն ուղղված հիմնահարցերի վերաբերյալ ներդրումային ծրագրերի ձևավորման, վերլուծության, փորձագիտական եզրակացությունների, խորհրդատվությունների և առաջարկությունների տրամադրման հարցեր,

- պաշտպանունակության բարձրացմանը նպաստող գիտական ուղղությունների և թեմաների վերահանում, քննարկումների կազմակերպում և զարգացման առաջարկությունների մշակում, անվտանգության հիմնահարցերին վերաբերող գիտական ուղղությունների և տեխնոլոգիական մշակումների հեռանկարների վերլուծություն, առաջարկությունների մշակում ու պետական մարմիններին ներկայացում:

«Շիրվանի պատմության հիմնահարցեր» աշխատաժողովը

Ս/թ. հունիսի 20-ին «Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամը Գիտությունների ազգային ակադեմիայում կազմակերպել էր աշխատաժողով՝ «Շիրվանի պատմության հիմնահարցեր» թեմայով: Աշխատաժողովի ժամանակ քննարկվեցին Աղվանքում (Կուրի ստորին հոսանքից մինչև Կասպից ծով) առաջացած տարբեր վարչական միավորներին, մասնավորապես Շիրվանին առնչվող հիմնահարցեր:

«Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամի տնօրեն Ռոբերտ Ղազարյանը իր բացման խոսքում նշեց, որ Ադրբեջանը բոլոր միջոցներով փորձում է յուրացնել հարևան ժողովուրդների՝ հայերի, իրանցիների, վրացիների, դաղստանցիների, թուրքմենների պատմությունն ու մշակույթը: Նա ընդգծեց, որ հենց այս համատեքստում է կարևորվում Շիրվանի պատմությունը: Ռոբերտ Ղազարյանը նաև նշեց, որ ադրբեջանական իշխանություններն ամեն գնով փորձում են ներկայացնել, թե Շիրվանն իրենց պատմության մի մասն է, և այնտեղ ստեղծված մշակույթն ադրբեջանական է: Հիմնադրամի տնօրենն ուշադրություն հրավիրեց այն փաստին, որ թեև պատմական Շիրվանը գտնվում է Ադրբեջանի տարածքում, այն ժառանգությունը, որ դարերով ստեղծվել է այդ տարածաշրջանում, ուղիղ իմաստով որևէ առնչություն չունի ներկայիս ադրբեջանցի կոչվող հանրույթի հետ:

Աշխատաժողովի մասնակիցներին ողջույնի խոսք հղեցին «Գաղղման-Շիրվան-Նախիջևան» համահայկական միության նախագահ Վիլեն Գաբրիելյանը և հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի տնօրեն Արման Եղիազարյանը: Վիլեն Գաբրիելյանն անդրադարձավ Շամախիի պատմությանը՝ որպես շիրվանահայության կրթական, մշակութային, հասարակական-քաղաքական



կյանքի և արհեստագործության ու վաճառականության հիմնական կենտրոնի: Նա ընդգծեց, որ Շամախիի հայ առևտրականներն իրենց ձեռքում էին կենտրոնացրել տարանցիկ ողջ առևտուրը:

Արման Եղիազարյանն էլ ամփոփ ներկայացրեց Շիրվանի պատմությունը՝ նշելով, որ այն Արմինիա վարչատարածքային միավորի մի մասն է եղել, ժամանակին գտնվել է նաև հայ Բագրատունիների թագավորության ազդեցության գոտում:

Ելույթներով հանդես եկան մի շարք հեղինակավոր գիտնականներ: Պատմական գիտությունների դոկտոր Ալեքսան Զակոբյանը ներկայացրեց Շաքի-Շիրվան երկրամասներում հայերին և ուղի-աղվաններին առնչվող վիճակագրությունը: Նա նշեց, որ, ըստ Մակար արք. Բարխուդարյանցի հավաքագրած տվյալների, Շիրվանի հայ բնակչությունը հիմնականում զաղթել է Արցախից:

«Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամի և ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտաշխատող Արտակ Մաղալյանն անդրադարձավ 16-17-րդ դարերում Արևելյան Այսրկովկասում ապրող հայերին, իսկ ԳԱԱ հնագիտության և ազ-

գագրության ինստիտուտի գիտաշխատող Տորգ Դալայանը ներկայացրեց Շիրվան տեղանվան ստուգաբանությունը՝ որպես տարածաշրջանի իրանացման հետևանք:

Քննարկման մասնակիցները նշեցին, որ հայերի ներդրումը զգալի է եղել նաև Բաքվում: Մասնավորապես ծանրակշիռ էր հայ առևտրաարդյունաբերական խավի դերակատարությունը հատկապես նավթարդյունաբերության ոլորտում, ֆինանսավարկային և բանկային համակարգերի կազմավորման ու զարգացման գործում:

Գիտաժողովի մասնակիցները շեշտեցին, որ հայերի ներկայությունը տարածաշրջանում կտրուկ անկում ապրեց 1918-1920 թթ.՝ Թուրքիայի և մուսավաթական Ադրբեջանի՝ երկրամասի հայ բնակչության նկատմամբ իրականացված ցեղասպանության հետևանքով: Հետագայում՝ 1988-1990 թթ., Շիրվանի տարածաշրջանն իսպառ հայաթափվեց:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ – 125

Ընթերցողին ենք ներկայացնում Ակսել Բակունցի կնոջ՝ Վարվառա Զիվիջյան-Բակունցի «ցուցմունքները» ամուսնու մասին: Ասում ենք «ցուցմունքներ» և ոչ թե հուշեր, որովհետև «ցուցմունքներ Բակունցի մասին» արտահայտությունը օգտագործված է շարադրանքի մեջ: Սա նշանակում է, որ այս գրությունը ոչ թե ազատ հուշագրություն է, այլ ցուցմունք: Գրել է 1954 թ. սեպտեմբերի 15-ին, երբ դեռ նոր-նոր սկսվել էր ստալինյան քաղաքական բռնություններին հաջորդող խրուշչովյան ծնհալը: Պիտի ենթադրել, որ այս գրությունն ստեղծվել է պաշտոնական մարմինների թելադրանք-պահանջով՝ Բակունցին արդարացնելու համար:

Ակսել Բակունցին ծերբակալել են 1936 թ. օգոստոսի 9-ին, ենթարկել են դաժանագույն հարցաքննությունների, մեղադրել են հակահեղափոխական-հակախորհրդային, ազգայնամոլական, ահաբեկչական գործունեության մեջ, զնդակահարել են 1937 թ. հուլիսի 8-ին, պաշտոնապես արդարացրել 1955 թ. մարտի 2-ին:

Բանտում եղած ժամանակ Բակունցի կինը մի քանի անգամ այցելել է ամուսնուն: Վերջին երկու այցելության

ժամանակ նրա հետ է եղել նաև նրանց միակ որդին, ով Բակունցի ծերբակալությունից առաջ ծանր հիվանդացել էր և ըստ էության փրկվել է վերահաս մահից: Բակունցի որդին՝ Սևադա Բակունցը (1925-1983), հետագայում դարձել է բժիշկ, եղել ՀԽՍՀ ԳԱ ֆիզիոլոգիայի ինստիտուտի տնօրենը, ընտրվել ԳԱ թղթակից անդամ, դարձել ԳԱ նախագահության գլխավոր գիտնական քարտուղար:

1937 թ. սեպտեմբերի 17-ին ծերբակալում են նաև Վարվառա Զիվիջյանին (1902-1965): Ծնվել է Նոր Նախիջևանում, Բակունցի հետ ծանոթացել և մտերմացել է խարկովում: Ամուսնացել են 1924 թ. հոկտեմբերի 14-ին: Զիվիջյանին մեղադրանք են ներկայացրել որպես ժողովրդի թշնամու կին, ով տեղյակ է եղել ամուսնու հակահեղափոխական, հակախորհրդային գաղտնի գործունեությանը և այդ մասին չի հայտնել համապատասխան մարմիններին: Նրան ծերբակալելուց հետո որդու խնամքը հանձնում են հարազատներին, իսկ քաղցկեղով հիվանդ մայրը մնում է պատշգամբում, որովհետև ունեցվածքը, այդ թվում՝ Բակունցի ձեռագրերը և տունը բռնագրավում են: Ութ տարվա աքսորից հետո Վարվա-

ռա Զիվիջյանը 1945-ի աշնանը վերադարձել է, մի կարծ ժամանակ մնացել է Գորիսում, շրջանի Շինուհայր գյուղում զբաղվել է ուսուցչությամբ, այնուհետև աշխատանքի անցել Երևանում՝ Քանաքեռի մանկատանը, և զբաղվել արդեն քսանամյա որդու խնամքով:

Բակունցի մայրը՝ Բոխչագյուլ խուրշուդյանը (1875-1957), 1946-ին դիմում է ՆԳժԿ մարմիններին՝ որդու մասին լուր իմանալու ցանկությամբ: Նրան պատասխանում են, թե Բակունցը ծանր հիվանդությունից հետո մահացել է 1945-ի նոյեմբերին: Այսինքն՝ քողարկում են զնդակահարության փաստը և կեղծում մահվան համագամբները:

Այս գրության մեջ Բակունցին վերաբերող այլևայլ հարցերի մասին տե՛ս մեր «Ակսել Բակունց: Կյանքը և ստեղծագործությունը» (2009) գրքում:

Բակունցի կնոջ «Ցուցմունքները» թարգմանել ենք ռուսերենից և հրապարակում ենք կրճատումներով:

Դավիթ ԳԱՄՊՐՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ

ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ ԲԱԿՈՒՆՑԻ ՄԱՍԻՆ

«...»: Բակունցի հետ ես ծանոթացել եմ 1923 թվականին: Մեր միջև ստեղծվեցին բարեկամական հարաբերություններ: Որքան շատ էի ճանաչում նրան, այնքան շատ էի զարմանում նրա ի բնե զարգացածությամբ, խելացիությամբ, ներքին մեծ մաքրությամբ ու շիտակությամբ առանձնացող և իր ժողովրդին խորունկ սիրող Բակունցով: «...»:

1923 թ. հուլիսին նա ավարտեց ինստիտուտը: Խարկովից մեկնելուց առաջ Բակունցն ինձ առաջարկեց ամուսնանալ իր հետ և միասին մեկնել Հայաստան, բայց ես նախապատրաստվում էի բուհի ընդունելության քննություններին: «...»: Այս խոսքերս նրան դառնացրին, 1923 թ. հուլիսի 13-ին Խարկովից նա մեկնեց Խորհրդային Հայաստան: Մի քանի ամիս մենք մամակագրական կապ չունեինք: Գործուղման բացակայության պատճառով ինձ չթույլատրեցին մասնակցել ընդունելության քննություններին: Այդ լուրը հասավ Բակունցին, և նա մամակով հայտնեց, որ ես կարող եմ սովորել Երևանում: 1923 թ. դեկտեմբերի 15-ին ես մեկնեցի Երևան և ընդունվեցի պետական համալսարան: «...»:

Հայրոց լեզվի վատ իմացությունը դժվարացնում էր իմ ուսումնառությունը: 1924 թ. ես թողեցի համալսարանը և ամուսնացա Բակունցի հետ: Նա ստանձնեց Գորիսի գավառային գյուղատնտեսի պաշտոնը, և մենք մեկնեցինք Բակունցի հարազատների մոտ: «...»:

1934 թ. ամռանը՝ մի հավաքույթի ժամանակ, Նաիրի Զարյանը Բակունցին անվանում է դաշնակցական: Այդպիսի զրպարտությունից զայրացած, կորցնելով ինքնատիրապետումը՝ Բակունցն ապտակում է նրան: Նաիրի Զարյանը նրա հանդեպ իր հոգու խորքում ունի պահում, բայց արտաքուստ դա նրան չի խանգարում լինել Բակունցին մոտ, Գորիս գնալիս վայելել Բակունցի մոր հյուրասիրությունը:

1935 թ. գարնանը Բակունցին կանչում են Հայաստանի կոմկուսի Կենտկոմ և տալիս են հատուկ հանձնարարություն՝ ֆիլմի համար գրել սցենար, որում արտացոլվի հայ ժողովրդի հերոսական պայքարը խորհրդային կարգերի հաստատման համար: «...»: 1935 թ. նոյեմբերի 15-ին մեր միակ որդին ծանր հիվանդացավ. անգինայից հետո նա ստացավ արյան վարակում (սեպսիս) և ութ ամիս շարունակ պայքարում էր մահվան դեմ: Երեխայի հիվանդությունը Բակունցը ծանր տարավ, օրերով չէր կարողանում հեռանալ հիվանդ երեխայից: Բայց հանձնարարությունը շտապ էր, և հարկավոր էր աշխատել: «...»: 1936 թ. գարնանը Բակունցն այդ աշխատանքը հիմնականում ավարտել էր: Հայաստանի կոմկուսի



Բակունցը կնոջ և որդու հետ

Կենտկոմի նախկին քարտուղար Ա. Խանջյանը համառորեն պնդում էր, որ Բակունցը 2-3 ամսով մեկնի Մոսկվա՝ կիսուցենարը քննարկելու: Նրա համար շատ դժվար էր հիվանդ երեխային թողնել ծանր կացության մեջ, բայց, գիտակցելով հանձնարարության կարևորությունը, մեկնեց: Ես հիվանդ երեխային տեղափոխեցի Դիլիջան: Բակունցը Երևան վերադարձավ օգոստոսի սկզբին և 1936 թ. օգոստոսի 9-ին ծերբակալվեց:

Կալանքի ժամանակ նրա հետ ունեցել են երեք տեսակցություն՝ 1936 թ. սեպտեմբերի վերջին, հոկտեմբերին և նոյեմբերին: Առաջին տեսակցության ժամանակ նա քիչ էր փոխվել: Նրա տրամադրությունը համեմատաբար առույգ էր, զգացվում էր, որ իր ծերբակալությունը համարում էր ինչ-որ թյուրիմացության հետևանք, որը շատ շուտ պիտի բացահայտվեր: Հոկտեմբերին ես նրան տվեցի հերթական սննդամթերքը և ստացա նրա օգտագործված սպիտակեղենը: Վերադառնալով տուն՝ մերկ մարմնին հագած նրա վերնաշապիկի վրա նկատեցի արյան հետքեր:

Հոկտեմբերի վերջին ինձ կանչեցին տեսակցության՝ ընդ որում զգուշացնելով, որ ես պարտադիր ներկայանամ երեխայի հետ: Դժվար էր ինձ հետ վերցնել երեխային, բայց ես չհամարձակվեցի գնալ առանց նրա: Տեսակցությունը չափազանց ծանր էր: Բակունցը մեկ ամսվա ընթացքում այնքան էր փոխվել, որ ես դժվարությամբ ճանաչեցի այն մարդուն, ում գիտեի երկար տարիների ընթացքում:

Ամբողջ տեսակցության ժամանակ Բակունցը հեծկտում էր՝ կորցնելով ինքնատիրապետումը: Նա ինձ խնդրեց վերցնել թուղթ ու մատիտ, գրել այն ամենը, ինչ ինքը կասի: «Իմացի՛ր, - ասաց նա

ինձ, - այն ամենը, ինչ ասում եմ քեզ, պատահական մտքեր չեն, այլ արդյունք են երկար անքուն գիշերների»: Եվ նա թելադրեց ինձ, թե ինչպես պիտի դաստիարակեմ և մեծացնեմ երեխային: «Որդիս, - անդրադարձավ երեխային՝ քանելով արցունքից ամբողջովին խոնավ թաշկինակը, - այնքան շատ բան եմ ցանկացել կյանքում անել քեզ համար, բայց ինձ չհաջողվեց, մայրդ կանի նաև իմ փոխարեն»: Զգացվում էր, որ այդ տեսակցությանը նա հրաժեշտ էր տալիս մեզ: Նա ինձ ասաց, որ ինքը գրել է լիազորագիր-կտակ, որով ինձ է փոխանցում իր հեղինակային իրավունքը:

Հաջորդ օրը ես մտա ՆԳժԿ, տարա նրա համար ընթերցելու գրքեր (առաջին երեք ամիսներին թույլատրեցին տանել զեղարվեստական գրականություն) և հետ ստացա այն գրքերը, որոնք նա արդեն կարդացել էր: Քննիչի օգնական Մալկովն ինձ փոխանցեց լիազորագիր-կտակը՝ գրված Բակունցի ձեռքով և հաստատված ՆԳժԿ-ի կողմից, ինչի պատճենը ներկայացնում եմ:

Տուն վերադառնալով՝ ես մեքենայաբար թերթատեցի գրքերը, որ նա վերադարձրել էր: Այդ գրքերի մեջ էր Գի դը Մոպասանի պատմվածքների մոր ժողովածուն: Այդ գրքի ցանկում «Պարան» պատմվածքի տակ ես նկատեցի մատիտով դրված փոքր կետեր: Այդ ինձ զարմացրեց, որովհետև այդ գիրքը մոր էր (նրանցից, որ կալանքից առաջ բերել էր Մոսկվայից): Բացեցի պատմվածքը, որի լուսանցքներն ամբողջովին սեղմված ընդգծված էին եղունգով: Պատմվածքի բովանդակությունը բացահայտեց նրա բարոյական ծանր կացությունը: Նոյեմբեր ամսին ինձ թույլատրեցին վերջին տեսակցությունը: Նա իրեն պահում էր հանդարտ:

«Հը, ընթերցե՞լ ես պատմվածքը, այն քեզ դո՞ւր է եկել», - հարցրեց նա ինձ: «Ծանր է», - պատասխանեցի ես նրան: Նա ասաց, որ հարցաքննությունն ավարտված է, և սպասում է դատին: «Հավանական է, պետք է մեկնել, թեպետ դեռ կտեսնենք», - ասաց նա: Ամուր եղիր, հաշվիր, որ ավտովթար է եղել, և ես վթարի եմ ենթարկվել»: Դիմելով որդուն, ով ներկա էր նաև այդ տեսակցությանը, Բակունցն ասաց. «Դու շա՞տ կամաչես, եթե քո հորը Երևանի փողոցներով տանեն դատարան»:

- Ո՛չ, հայրիկ, - պատասխանեց տղան:

- Ճիշտ է, տղաս, դու մի ամաչիր քո հոր համար, հիշիր, հայրդ այնպիսի բան չի արել, ինչի համար կյանքում պետք է կարճես, - ասաց նա երեխային:

-Իսկ դու, - դիմեց ինձ, - անպայման հետաքրքրվիր «Ջանգեզուր»-ով, նույնիսկ եթե չկամենան ինձ համարել սցենարիստ, բայց նյութերի հեղինակը միայն ես եմ: Սցենարի պատճենը կա Մոսկվայում, Հայաստանի կոմկուսի Կենտկոմում և ՆԳժԿ-ում, դու այդ գործը չանտեսես, - և, թփփազանցելով երեխայի թիկունքին, ասաց, - դա պատկանում է նրան:

1937 թ. հուլիսի 18-ին չընդունեցին իմ տարածը՝ ասելով, որ Բակունցն արդեն աքսորվել է:

Այդ ընթացքում ես ավարտել էի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտը: Զբաղվում էի դիպլոմային աշխատանքով: Նյութապես (հիվանդ երեխայի և մայրիկիս հետ) ապրում էի ծանր պայմաններում: Նրա ծերբակալությունից հետո ինձ աշխատանք չտվեցին: 1937 թ. սեպտեմբերի 17-ին ինձ կալանավորեցին, մեր բնակարանն ամբողջ ունեցվածքով արգելափակեցին, իմ երեխային հանձնեցին Բակունցի եղբորը, քաղցկեղով հիվանդ մորս թողեցին պատշգամբում, իսկ ինձ տարան բանտ:

Բակունցի ձեռագրերը տարան ինձ ծերբակալելու ժամանակ: Առանց հարցաքննության ութ ամիս պահելով ինձ բանտում՝ հատուկ խորհրդակցության ուղղմամբ՝ որպես հայրենիքի դավաճանի ընտանիքի անդամ, ութ տարով աքսորեցին Տեմինկովյան ծամբար, որտեղ ես մնացի ութ տարի: Վերադարձիս մեկնեցի Գորիս, ստացա անձնագիր ըստ 38-39 հոդվածների գրանցմամբ՝ իմ բնակավայրի տարածքային սահմանափակմամբ:

Իմ վերադարձից հետո Բակունցի մայրն իր որդու կապակցությամբ 1946 թ. դիմում էր տվել: Գուլագից նրան պատասխանել էին, որ ծանր հիվանդությունից հետո նա մահացել է 1945 թ. նոյեմբերին: «...»:

Վարվառա ԲԱԿՈՒՆՑ (ԶԻՎԻՋՅԱՆ)

15 սեպտեմբերի, 1954 թ.

Համլետ Ամբակունի ԳԵՎՈՐԳՅԱՆ



97 տարեկանում կյանքից հեռացավ մեծանուն գիտնական, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի երկարամյա գլխավոր գիտաշխատող, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Համլետ Գևորգյանը:

Համլետ Գևորգյանը մեծ ավանդ ունի հայ փիլիսոփայական մտքի զարգացման և երիտասարդ կադրերի պատրաստման գործում:

Համլետ Գևորգյանը ծնվել է 1927 թ. Երևանում: 1944-ին ավարտել է Երևանի Մռավյանի անվան ռուսական դպրոցը: 1950 թ. ավարտել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետը, 1955 թ.՝ Գիտությունների ակադեմիայի փիլիսոփայության սեկտորի ասպիրանտուրան և պաշտպանել թեկնածուական ատենախոսություն՝ «Արստրակցիայի դերը իմացության մեջ» թեմայով: 1970 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ «Հավանական և հավաստի գիտելիք» թեմայով, որն ամփոփում էր համանուն գրքի և նրան հարող տասնյակ հրապարակումների թեգերը: 1972 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի գիտական կոչում: 1996 թ.-ին ընտրվել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս:

Համլետ Գևորգյանը 1956 թ.-ից աշխատել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում: Եղել է ինստիտուտի փիլիսոփայության սեկտորի իմացաբանության թեմատիկ խմբի, ինստիտուտի դիալեկտիկական մատերիալիզմի և բնագիտության փիլիսոփայական հարցերի բաժնի վարիչ, գիտության փիլիսոփայության, ժամանակակից փիլիսոփայության, տեսական փիլիսոփայության գիտահետազոտական խմբի վարիչ: 1965-1980 թթ. համատեղությամբ ԵՊՀ-ում դասավանդել է փիլիսոփայություն, նորագույն և ժամանակակից փիլիսոփայության պատմություն, իմացաբանություն, գիտության փիլիսոփայություն և մեթոդաբանություն, տրամաբանություն: 1992-1996 թթ. եղել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի տնօրենը:

Համլետ Գևորգյանի գիտական աշխատությունները հրատարակվել են հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նրա աշխատությունները վերաբերում են նոր և ժամանակակից փիլիսոփայության պատմության հիմնախնդիրներին, առանձնապես իմացաբանությանը, գիտության մեթոդաբանությանը և տրամաբանությանը, ինչպես նաև հայ փիլիսոփայության պատմության մեթոդաբանական հարցերին, մշակույթի պատմափիլիսոփայական տեսանկյունների:

Լայն ճանաչում են գտել Հ. Գևորգյանի «Իմացաբանության մեջ արստրակցիայի դերի մասին» (1957) և «Հավանական և հավաստի գիտելիք» (1965) գրքերը: Դրանց հարում է գիտական հիպոթեզի մասին նրա աշխատությունների շարքը («Հիպոթեզը և նրա դերը գիտության մեջ», 1959, «Ժամանակակից մեթոդաբանական վեճերը և գիտական հիպոթեզի պրոբլեմը», 1984 և այլն), որոնցում հիպոթեզի պրոբլեմն աղեկսկսված է գիտելիքի զարգացման ժամանակակից տեսությունների հետ:

Համլետ Գևորգյանը մշակել է տրամաբանական-մեթոդաբանական հետազոտությունների ծրագիր, որն իրագործվել է նրա խմբագրությամբ լույս ընծայված «Գիտական գիտելիքի տրամաբանական վերլուծության փիլիսոփայական հարցերը» կոլեկտիվ աշխատության երեք պրակներում (1969, 1971, 1974), «Փիլիսոփայությունը և գիտության մեթոդաբանական հարցերը» ժողովածուում (1977): Համլետ Գևորգյանը 1994 թ. Վ. Բաղդասարյանի համահեղինակությամբ գրել է «Տրամաբանություն» դասագիրքը ավագ դպրոցի համար:

«Գիտության պատմական մեթոդաբանության ակնարկ» գրքում (1987) նա ի հայտ է բերել պատմամշակութային գործոնների ազդեցությունը գիտական գիտելիքի մաս երեքին իմացաբանական բնութագրերի վրա, վերլուծել է 20-րդ դարի այն հիմնական փիլիսոփայական ուսմունքները, որոնցում վերանայվում են գիտության փիլիսոփայության դասական ըմբռնումները, և տարբեր տեսանկյուններից հիմնավորել է պատմամշակութային մոտեցումը: Այս հարցադրումների համագույակետում է պատմական վերակազմության մեթոդի հիմնախնդիրը, որի վերաբերյալ Համլետ Գևորգյանի նախածեղծությամբ գրվել է նրա խմբագրությամբ հրատարակվել է կոլեկտիվ աշխատություն՝ «Պատմական վերակազմության մեթոդը գիտության պատմության մեջ» (1990):

«Ազգային մշակույթը պատմության փիլիսոփայության տեսանկյունից» գրքում (1992) և մի ամբողջ շարք այլ հրապարակումներում Համլետ Գևորգյանն արծարծել է հայ փիլիսոփայության պատմության մշակութաբանական տեսանկյունները, ուրույն մեկնաբանություն է տվել մշակույթի տեսության հարցերին և դրանք մասնավորեցրել հայկական մշակույթի և հայոց պատմության նկատմամբ:

Համլետ Գևորգյանը Հայկական հանրագիտարանի համար գրել է շուրջ հարյուր հոդված փիլիսոփայության և տրամաբանության հանգուցային հարցերի, կատեգորիաների, փիլիսոփայական ուղղությունների, փիլիսոփայության և տրամաբանության նշանավոր դեմքերի մասին: Նա եղել է հանրագիտարանի փիլիսոփայության գիտաճյուղային խորհրդի անդամ և նախագահի տեղակալ: Եղել է Տերմինաբանական կոմիտեի անդամ, ՀՀ Գերագույն խորհրդի սահմանադրական հանձնաժողովի անդամ, ՀՀ Լեզվի պետական տեսչության Լեզվի բարձրագույն խորհրդի անդամ:

Նա խմբագրել է գրքեր, կատարել է թարգմանություններ, այդ թվում՝ նորագույն և ժամանակակից փիլիսոփայության պատմության բուհական երկու դասագրքերի թարգմանությունը: Պատրաստել է գիտության թեկնածուներ և դոկտորներ:

ՀՀ ԳԱԱ նախագահությունը, ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքը, ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի տնօրինությունը և ողջ անձնակազմը ցավակցում են Համլետ Գևորգյանի հարազատներին, մերձավորներին և գործընկերներին: Նրա հիշատակը միշտ վառ կմնա նրան ճանաչողների, աշակերտների հոգիներում, իսկ նրա թողած գիտական ժառանգությունը բարձր կգնահատվի գալիք սերունդների կողմից:

ՀՀ ԳԱԱ նախագահություն
ՀՀ ԳԱԱ հայագիտության և
հասարակական գիտությունների
բաժանմունք
ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության,
սոցիոլոգիայի և իրավունքի
ինստիտուտ

ԳԻՏԱԿԱՆ ՎԱՐԿԱԾՆԵՐ

Երբ այս թեման վերնագրում էի, մտածում էի՝ քչերն են ծանոթ «Գիլգամեշ» հնագույն էպոսին: Առանց ընթերցման դժվար է եզրահանգել, թե իրականում ինչ է տեղի ունեցել: «Ծովուն մեջեն ափերուն կը մայեի, տասներկու երկամեն կղզի մը երևան ելավ, տապանը 7 օր մնաց հողի վրա»: Ուշադիր լինելու դեպքում կհասկանաք, որ ջրի միջից կղզի բարձրացավ, և Նոյան տապանը հայտնվեց լեռան գագաթին: Իրականում ընդերքում կատարվել էր երկրաբանական պրոցես: Գիտնականների հիմնավորումն այսպիսին է. հոր վիրապի դիմաց՝ երոզիոն հատվածում, տեղի է ունեցել տեկտոնական շարժերի ուժեղ և արագ ներգործություն, և Արարատ լեռը բարձրացել է՝ իր հետ բարձրացնելով տապանը:

Հազարամյակների ընթացքում քանի՞ անգամ է երևույթը կրկնվել, անհայտ է, միայն մի բան է հստակ, որ լեռը ստացել է մի նոր ռելիեֆային տեսք: Եթե մի դեպքում տա-

ԱՐԱՐԱՏԻ ԾՈՎԸ

պանը բարձրացել է, ապա մյուս դեպքում բարձրացած լեռան ճնշման հետևանքով էրոզիոն հատվածում առաջացել են խորացում, նստվածք, փոս, որտեղ ջուրը կուտակվել է: Եվ քանի որ այդ նստվածքը լեռան ամբողջ երկայնքով է, Նախիջևանից մինչև Արմավիր, ապա կարելի է եզրակացնել, որ երևույթը՝ լեռան բարձրացումն ու մակերևույթի խորացումը, սերտ առնչություններ են, մեկը մյուսով պայմանավորված: Խոսքն արդեն լոկ փոս առաջանալու, նստվածքի մասին չէ, այլ Արարատյան մեծ ջրավազանի, որը պայմանականորեն կարելի է անվանել ծով: Ժամանակին այն համակարգչային եղանակով վերականգնել ու քարտեզագրել են ՀՀ ԳԱԱ երկրաբանության ինստիտուտի աշխատակիցները: Ստորև ներկայացնում ենք Արարատյան ծովի քարտեզը:

Ծովն ընդգրկում է Արարատյան դաշտը, որտեղ հիմա մեր քաղաքներն են, գյուղական բնակավայրերը, հնավայրերը: Արաքս գետի երկու կողմերում շուրջ 30 կմ տարածվել է ծովը: Խորությունը՝ 100 մետր: Առիթ ունեցել են շրջագայելու Ախուրյանի ու Արաքսի ափերով: Տեսածս ու ծովի խորությունն անհամեմատելի են, հիմա՝ ամռանը, ջուրը ծնկներդ հագիվ է թրջում: Երբ դիտում ենք քարտեզը, նոր միայն հասկանում ենք, որ ջուրը Արարատի շուրջըլորն է, այն էլ՝ Արաքսի բարձրությամբ:

Արարատի ծովի մասին խոսելիս առաջինը հիշվում է Յասունի անունը: Նա Ք.ա. 13-12-րդ դարերում՝ Տրոյայի պատերազմից հետո, «ոսկե գեղմի» փնտրողներով եկել է Կոլխիդա, և կան փաստեր, որոնք հավաստում են նրա՝ Հայաստան այցելելու մասին:

Ստրաբոնը գրում է. «Հին ժամանակներում խոյի մորթին փռում էին արագահոս լեռնային ոսկեբեր գետակների մեջ և կապում, որ ջուրը չտանի: Որոշ ժամանակ անց ջրի հետ եկող ոսկին մնում էր բլրի փնջերի մեջ, և գեղմը դառնում էր ոսկեպատ»: Չմանրամասնելով ճանապարհորդության դժվարությունները՝ Յասունն իր ուղեկիցներով հասնում է Արարատյան դաշտ: Ի գարմանս, Արաքսը, եթե կարելի է այսպես ասել, գրկաբաց չի դիմավորում հյուրերին: Գետը ծովացել էր ու սփռվել հունից դուրս: Ինչպե՞ս հավաքել ոսկին, եթե գետն արագահոս չէ: Ստրաբոնը այսպիսի հիշողություն է թողնում. «Ասում են, թե հնապես Արաքսն էլ Հայաստանում լեռներից իջնելով փռվում և ծովանում էր ստորադիր դաշտերում, որովհետև ելք չուներ: Յասունը, մանապես Տեմպեի, շինել է մի բացվածք, որով այժմ ջուրը հոսում է Կասպից ծով: Արանով մերկացավ Արաքսենի դաշտավայրը, որով հոսելով գետը հասնում է ջրվեժին»:

Մենք գիտենք այս ջրվեժի տեղը: Նախիջևան մտնելիս այն այնպիսի գեղեցիկ փրփուր է առաջացնում, որը հիացրել է մաև ամենայն հայոց բանաստեղծ Զովհաննես Թումանյանին: Այսօր մեր սերունդը հասկանալի պատճառով հնարավորություն չունի ջրվեժը մոտիկից դիտելու և հիմնալու:

Ստրաբոնի այն տեղեկությունը, որ Յասունն անձամբ է բացել Արաքսի փակված հունը, որոշ հետազոտողների հիմք են տալիս եզրակացնելու, որ Յասունը, իրոք, եղել է Հայաստանում:

Ենթադրություն կա նաև, որ Փոքր Մասիսը փլուզվել է ու փակել ջրի հոսքը: Ջուրը բարձրացել է, և գոյացել է ծով: Համակարգչային պատկերով կարելի է տեսնել ափերից դուրս եկած «ջրախեղդ» Արաքսը: Լեռան շուրջըլորը դարձել էր ջրածածկ, այդ թվում՝ Արարատի հյուսիսային կողմը՝ Նախիջևանից մինչև Ալմաշեն, Առատաշեն: Երբ բացվել է Արաքսի հունի դիմացը, ջուրն ազատորեն հոսել է Կասպիական: Այսպես, ավարտվել է Արարատի ծովի պատմությունը, և Արարատյան դաշտավայրում սկսվել է մարդկանց բնականոն կենսագործունեությունը:

Ենթադրությունը վարկածի մնալ է: Անշուշտ, այն կարող է կասկածի տեղիք տալ, սակայն ընդունելի է համարվում այնքան ժամանակ, քանի դեռ չի ասվել գիտական վերջնական խոսք:

Գևորգ ՆԱԶԱՐՅԱՆ
Լրագրող- հետազոտող

Գիտություն

Գլխավոր խմբագիր՝ Վ.ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
Խմբագիր՝ Ա.ՍԱՀԱԿՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղդասարյան 24/4, հեռ. 58-18-23, 3-16
Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:
Ստորագրված է տպագրության՝ 24.06.2024 թ.:
Տպագրվում է ՀՀ ԳԱԱ տպարանում: